

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

<<ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՓԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՂՈՒՐՄԱԼԻ ԽԱՉԱԿԱՊԻ ԱՎԱԶԱԿՈՊՃԱՅԻՆ
ԽԱՌՆՈՒՐԴԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՂՈՒՐՄԱԼԻ 3 ՏԵՂԱՄԱՍԻ ՓԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
/ԼՐԱՄՇԱԿՎԱԾ/

<<ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ>> ՍՊԸ տնօրեն՝

Ռ. Խաչատրյան

ԵՐԵՎԱՆ 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ	8
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	29
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ՝.....	57
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	65
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆ ԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ՝.....	67
6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝.....	73
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....	80

ՆԱԽԱԲԱՆ

Հանքի փակման ծրագրի կազմման հիմնական նպատակն օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում խախտված շրջակա միջավայրի բնական բաղադրիչների վերականգնման և հետագա մոնիթորինգի իրականացման սկզբունքային հիմնահարցերի ձևակերպումն է:

Ծրագիրը կազմվել է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի պահանջներին համապատասխան, որի նպատակն է նախատեսել ֆինանսական երաշխիքներ բացահանքի ժամանակավոր դադարեցման կամ վերջնական փակման դեպքերում:

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ն ընդերքօգտագործման աշխատանքներ է իրականացնում ՀՀ Լոռու մարզի Ղուրսայի խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսայի 3 տեղամասում: ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ներկայացվում է հանքի փակման ծրագրի վերջնական տարբերակը և ընկերությունը նախատեսում է հրաժարվել հանքավայրի ընդերքօգտագործման թույլտվությունից:

Հանքի փակման ծրագրի կազմման ելակետային նյութեր են հանդիսացել.

- ՀՀ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» օրենքը
- ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքը
- Կատարված երկրաբանական հետախուզական աշխատանքների հաշվետվությունը՝ պաշարների հաշվարկմամբ,
- Հանքավայրի շահագործման նախագիծը,
- Ոչ հանքային շինանյութերի ձեռնարկությունների տեխնոլոգիական նախագծման նորմերը և այլ հրահանգչական ու նորմատիվային փաստաթղթեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր` բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործոնների, նյութերի, երեւույթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջեւ.

շրջակա միջավայրի վրա ազդեցություն` հիմնադրությային փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները.

նախատեսվող գործունեություն` շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

ձեռնարկող` սույն օրենքի համաձայն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթուղթ մշակող, ընդունող, իրականացնող և (կամ) գործունեություն իրականացնող կամ պատվիրող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, իրավաբանական կամ ֆիզիկական անձ.

ազդակիր համայնք` շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք.

շահագրգիռ հանրություն` փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք.

գործընթացի մասնակիցներ` պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, սույն օրենքի համաձայն,

մասնակցում են գնահատումների եւ (կամ) փորձաքննության գործընթացին.

հայտ՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրության փաստաթղթի մշակման եւ (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ.

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ սույն օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

Ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ.

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար սույն օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

Ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին

համապատասխանող

տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց

բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի

ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

հողային պրոֆիլ՝ հողագոյացման գործընթացում օրինաչափորեն փոփոխվող և գենետիկորեն կապակցված հողային հորիզոնների ամբողջություն.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի պոտենցիալ բերրի շերտ՝ հողային պրոֆիլի ստորին մասը, որն իր հատկություններով համընկնում է պոտենցիալ բերրի ապարների (բուսականության աճի համար սահմանափակ բարենպաստ քիմիական կամ ֆիզիկական

հատկություններ ունեցող լեռնային ապարներ) հատկություններին.

հողածածկույթ՝ երկրի կամ դրա ցանկացած տարածքի մակերևույթը ծածկող հողերի ամբողջությունն է.

հողի բերրի շերտի հանման նորմեր՝ հողի հանվող բերրի շերտի խորությունը (սմ), ծավալը (m^3), զանգվածը (տ).

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները.

բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում.

բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ

ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեքներ կայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ.

պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձաններ` պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները` իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային եւ բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը` անկախ պահպանվածության աստիճանից:

Կարմիր գիրք` <<Կարմիր գիրքը միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին>>:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

Լոռու մարզի Ղուրսալի-Խաչակապի հանքավայրի Ղուրսալ-3 տեղամասում նախատեսվում է իրականացնել հանքավայրի փակման աշխատանքներ:

ԱԿԽ-ի հանքավայրը գտնվում է Փամբակ գետի ձախ ափին` Արջհովիտ գյուղի հյուսիսային մասում:

Հաստատված պաշարներով Ղուրսալի-Խաչակապի ԱԿԽ-ի հանքավայրը, որը ներկայացված է թվով 3 տեղամասերով: Հանքավայրի պաշարները B+C₁ կարգով, 217,3 հազ.մ³ քանակով հաստատվել են ՀՀ ԲՆ ՕՀՊԳ 2003թ. դեկտեմբերի 22-ի թիվ 25 որոշումով, այդ թվում B -47,3 հազ.մ³, C - 170 հազ.մ³ :

Հանքավայրի ավազակոպձային խառնուրդը համապատասխանում է որպես հումք շինարարական խճի և ավազի արտադրության համար: Հանքավայրի օգտակար հանածոն իր որակական հատկություններով բավարարում է ԳՈՍՏ -24100-80-ի

/բացառությամբ կավային մասնիկների պարունակության/, ՀՍ ՌՕՇ 8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» և ՀՍ ՌՕՇ 8736-95 «Ավազ շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջներին համապատասխան վերջնաարտադրանքների ստացումը:

Տեղամասը գենետիկորեն կապված է Փամբակ գետի արտաբերման և գետա-ափամերձ ժամանակակից այլուվիալ-պրոյուվիալ նստվածքների հետ ու հանդիսանում է գետաողողատային տիպի օբյեկտ:

Տեղամասի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են ժամանակակից այլուվիալ մանրահատիկային ավազակոպճային առաջացումները, որոնք պարունակում են չնչին քանակությամբ կավափոշային նյութ: Այս նստվածքները ծածկում են ժամանակակից այլուվիալ ավազակավերին և կավավազներին: Ավազակոպճային խառնուրդը զբաղեցնում է Փամբակ գետի ափամերձ տարածքները:

Հանքավայրի տարածքում Տեղամասում ավազակոպճային առաջացումները ներկայացված են կավավազներով թույլ ցեմենտացված մանրաբեկորային զանգվածով:

Տեղամասի ԱԿԽ-ի կուտակը ունի մերձհորիզոնական, փոքր հզորություն և հիմնատակվում է ժամանակակից կավավազային, ավազակավային առաջացումներով: Օգտակար հանածոն բնութագրվում է համեմատաբար համասեռ ներքին կառուցվածքով, դրանում կոպիճն ու ավազը առանձին շերտեր չեն գոյացնում և բեկորային զանգվածի միջին հատիկային կազմը ըստ տարածման զգալի փոփոխություն չի կրում: Ավազակոպճային խառնուրդում ավազը տարակազմ հատիկային է և բաղկացած է հիմնականում դաշտային սպաթի, քվարցի և հիմնականում մուգ գույնի տարբեր ապարների և միներալների հատիկներից:

Ավազակոպճային խառնուրդում կոպիճը բազմահատիկային (պոլիմիկտային) է, կազմված հիմնականում հրաբխածին և մագմատիկ ապարների ու միներալների բեկորներից, որտեղ գերակշռում են անդեզիտը, դաջիտը, դիաբազը, բազալտը, դիորիտը: Կոպճի հատիկների չափերը չեն գերազանցում 70 մմ-ը:

ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿՈՂՄԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացել են երեք հանրային լսումներ: Օրակարգում՝ «Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ի կողմից օգտակար հանաձոյի արդյունահանման թույլտվության ժամկետի դադարեցման նպատակով ներկայացված Արջհովիտ վարչական տարածքում գտնվող հանքավայրի փակման ծրագրի աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումն է: Ընկերության ներկայացուցիչները պարզաբանել են, որ ընկերության կողմից ամբողջությամբ վճարվել է ռեկուլտիվացիայի գումարը: Համայնքի ներկայացուցիչը ողջունել է ընկերության նախաձեռնությունը և համայնքի օժանդակությունը հայտնել հանքավայրի փակման աշխատանքների իրականացման վերաբերյալ:

Հանրային լսումների ընթացքում կողմերը համաձայնության են եկել, որ հանքի փակման դեպքում ընկերությունը հաշվի է առնելու ազդակիր համայնքի դիրքորոշումը:


**ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, ՓԱԿՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

«Ռուբեն և Էդվինա» ՍՊ ընկերությունը Ղուրսալի-Խաչակապի հանքավայրի Ղուրսալ-3 ԱԿԽ տեղամասում նախատեսում է իրականացնել հանքի փակման աշխատանքներ:

Հողերը հանդիսանում են ընկերության սեփականությունը, գյուղատնտեսական նշանակության վարելահողեր են:

Ստորև ներկայացվում է փակման ծրագրի տարածքի սխեմատիկ քարտեզը, որտեղ նշված են հստակ մակերեսները՝ ամբողջությամբ մարված պաշարների, մասնակի մարված պաշարների և ոչ արդյունահանված աշխատանքների:

Նախատեսվում է ռեկուլտիվացնել 3573քմ ամբողջությամբ մարված պաշարների հատվածը:



Պաշարները մարված են՝ 3573 մ²

Մարված են մասնակի՝ 1841 մ²

Արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել՝ 4571 մ²

ՇԱԹ-29/563 թույլտվության ծայրակետերի կոորդինատներով սահմանափակված տեղանքի փաստացի մակերեսը կազմում է 9985 մ²:

ՇԱԹ-29/563 թույլտվության ծայրակետերով սահմանափակված տեղանքի կոորդինատները ARM-WGS 84 համակարգով՝

1. 4522709 8443340
2. 4522710 8443222
3. 4522796 8443227
4. 4522783 8443301
5. 4522800 8443406
6. 4522787 8443388
7. 4522779 8443383
8. 4522762 8443329
9. 4522724 8443343
10. 4522714 8443336

ՇԱԹ-29/563 թույլտվությունը տրամադրվել է 2017թ նոյեմբերի 12-ին 18 տարի ժամկետով:
Շահագործումն իրականացվել է ընդլայնական ընթացքաշերտով, խորացող մշակման համակարգով:

«ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷԴՎԻՆԱ» ՍՊ ընկերությանը օգտակար հանածոյի արդյունահանման ՇԱԹ-29/563 թույլտվությամբ տրամադրված տեղամասից.

Հետևյալ եզրակետերով սահմանափակված 3573 մ² մակերեսով տարածքից արդյունահանումն իրականացվել է ամբողջությամբ: Ռեկուլտիվացիա իրականացվելու է միայն նշված կոորդինատներով տարածքում:

1	Y=8443222.000	X=4522710.000
2	Y=8443223.399	X=4522734.059
3	Y=8443226.005	X=4522734.166
4	Y=8443238.985	X=4522734.194
5	Y=8443254.693	X=4522736.988
6	Y=8443266.866	X=4522737.616
7	Y=8443278.769	X=4522737.669
8	Y=8443291.349	X=4522739.750
9	Y=8443296.498	X=4522740.700
10	Y=8443312.484	X=4522744.730
11	Y=8443320.397	X=4522747.034
12	Y=8443324.906	X=4522750.076

13	Y=8443329.206	X=4522750.509
14	Y=8443329.796	X=4522755.133
15	Y=8443331.393	X=4522755.506
16	Y=8443343.000	X=4522724.000
17	Y=8443336.000	X=4522714.000
18	Y=8443340.000	X=4522709.000

Հետևյալ եզրակետերով սահմանափակված 1841 մ² մակերեսով տարածքում արդյունահանումն իրականացվել է մասնակի:

1	Y=8443223.399	X=4522734.059
2	Y=8443224.035	X=4522745.008
3	Y=8443235.400	X=4522748.586
4	Y=8443270.776	X=4522752.379
5	Y=8443281.111	X=4522756.896
6	Y=8443298.623	X=4522758.521
7	Y=8443310.128	X=4522763.801
8	Y=8443344.760	X=4522769.823
9	Y=8443359.827	X=4522773.904
10	Y=8443383.383	X=4522779.612
11	Y=8443383.000	X=4522779.000
12	Y=8443329.000	X=4522762.000
13	Y=8443331.393	X=4522755.506
14	Y=8443329.796	X=4522755.133
15	Y=8443329.206	X=4522750.509
16	Y=8443324.906	X=4522750.076
17	Y=8443320.397	X=4522747.034
18	Y=8443312.484	X=4522744.730
19	Y=8443296.498	X=4522740.700
20	Y=8443291.349	X=4522739.750
21	Y=8443278.769	X=4522737.669
22	Y=8443266.866	X=4522737.616
23	Y=8443254.693	X=4522736.988
24	Y=8443238.985	X=4522734.194
25	Y=8443226.005	X=4522734.166

Հետևյալ եզրակետերով սահմանափակված 4571 մ² մակերեսով տարածքում արդյունահանում չի իրականացվել և ռեկուլտիվացիայի կարիք չկա:

1	Y=8443224.035	X=4522745.008
2	Y=8443227.000	X=4522796.000
3	Y=8443301.000	X=4522783.000
4	Y=8443406.000	X=4522800.000
5	Y=8443388.000	X=4522787.000
6	Y=8443383.383	X=4522779.612
7	Y=8443359.827	X=4522773.904
8	Y=8443344.760	X=4522769.823
9	Y=8443310.128	X=4522763.801
10	Y=8443298.623	X=4522758.521

11 Y=8443281.111 X=4522756.896
12 Y=8443270.776 X=4522752.379
13 Y=8443235.400 X=4522748.586

Կոորդինատները տրված են WGS-84 (ARMREF 02) համակարգով:

Մնացորդային պաշարները 2025թ հունվարի 1-ի դրությամբ կազմում են 73,77հազ խմ՝ համաձայն լիազոր մարմին ներկայացված հաշվետվության:

Մակաբացման ապարների ընդհանուր ծավալը նախագծի համաձայն 2575 մ³ է, այս պահին հեռացվել են 1400 մ³ ծավալով մակաբացման ապարներ, որոնք արդեն իսկ փոխված են ամբողջությամբ արդյունահանված տեղանքում, քանի որ 7-րդ տարվանից սկսած ընկերությունն իրականացրել է մակաբացման ապարների հետ բերում, փռում և հարթեցում:

Հանքավայրի հաստատված և Տրամադրված պաշարները ստատիկ են:

Հանքավայրի տարածքում բուսահողը բացակայում է, լցակույտ առաջացրած ապարները, որնք ներկայացված են մակաբացման ապարներով և տիղմային նյութով կուտակվել են բացահանքի արևելյան մասում, ժամանակավոր արտաքին լցակույտում, որի առավելագույն բարձրությունը կազմում է 5մ: Շահագործման 7-րդ տարվանից սկսած իրականացվել է ներքին լցակույտաառաջացում և բացահանքի հատակի հարթեցում:

Ղուրսալի Խաչակապի ավազակուպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի տարածքը վարչատնտեսական առումով մտնում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ խոշորացված համայնքի Արջհովիտ բնակավայրի մեջ և գտնվում է Արջհովիտ /Ղուրսալի/ գյուղից շուրջ 0,8կմ, Նոր Խաչակապից շուրջ 2,1կմ և Քարաձորից՝ շուրջ 1,0կմ հեռավորության վրա :

Հանքավայրի հայցվող տեղամասի փակման համար օգտագործվելու են միայն գոյություն ունեցող ճանապարհները:

Տեղամասը հարում է Փամբակ գետի ձախափնյա ողողահունին և բնութագրվում է 1455-ից 1461 մ բացարձակ բարձրություններով:

Լեռնագրական տեսանկյունից շրջանի տեղանքը տիպիկ լեռնային է, խիստ կտրատված ռելիեֆով:

Շրջանի հիմնական ջրային զարկերակը Փամբակ գետն է իր մի շարք վտակներով: Առկա են նաև բազմաթիվ աղբյուրներ, որոնք վերագրվում են հիմնականում Փամբակի

լեռնաշղթային:

Կլիման չափավոր ցամաքային է: Տարեկան միջին ջերմաստիճանը $+ 13^{\circ}\text{C}$ է: Նվազաօդային ջերմաստիճանը լինում է ձմռանը ($- 25^{\circ}\text{C}$), իսկ առավելագույնը՝ ամռանը ($+ 30^{\circ}\text{C}$): Մթնոլորտային տեղումների քանակը տարեկան 600-800 մմ է: Տեղումները հիմնականում լինում են գարնանը և աշնանը:

Շրջանի լանդշաֆտը լեռնատափաստանային է, իսկ Լեռնապատ գյուղից հարավ, Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջին՝ լեռնատափաստանային, լեռնաանտառային և ալպյան:

Շրջանի և ընդահներապես Լոռու մարզի տնտեսության մեջ զգալի տեղ է զբաղեցնում գյուղատնտեսությունը, որի հիմնական ճյուղերն են անասնապահությունը և հողաօրծությունը:

Գործում են մի շարք տեղական նշանակության օբյեկտներ, սննդի (հիմնականում կաթնամթերքի), թեթև արդյունաբերության (հիմնականում կարի) ձեռնարկություններ և շինանյութերի արտադրության փոքր արտադրա-մասեր: Մարզում գործում են մի շարք շինարարական և ճանապարհինական կազմակերպություններ: Մարզի տնտեսության գլխավոր ճյուղերից է լեռնամետալուրգիան:

Լոռու մարզը բնութագրվում է մի շարք գունավոր և ազնիվ մետաղների, ինչպես նաև շինանյութերի (բազալտների, գրանիտոիդների, տուֆաավազաքարերի, կերամիկական և հրակայուն կավերի, ավազակոպճային խառնուրդների և այլն) հանքավայրերի առկայությամբ: Տեղամասի հարակից յուղերը էլեկտրաֆիկացված և գազաֆիկացված են:

Շրջանի բնակչության որոշակի հատվածը նախկինում աշխատել է շինանյութերի արդյունահանման և մշակման ոլորտում, ունի տվյալ աշխատանքները կատարելու փորձ և հմտություն:

Հանքի փակման ծրագրի կազմման հիմնական նպատակը օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում խախտված/վտանգված շրջակա միջավայրի բնական բաղադրիչների (հողային և ջրային ռեսուրսներ, մթնոլորտային օդ, բուսական և կենդանական աշխարհ) վերականգնման և հետագա մոնիտորինգի իրականացման սկզբունքային հիմնահարցերի ձևակերպումն է:

Փակման ծրագրում ներկայացվել է տեղեկատվություն օգտակար հանաձոյի հանքավայրի շահագործման ավարտից հետո կատարվելիք բոլոր միջացառումների վերաբերյալ: Այս միջոցառումներն ընդհանրացված համատեքստում նպատակաուղղված պետք է լինեն հետևյալ խնդիրների լուծմանը.

ա. ենթակառուցվածքների, մեքենաների, սարքավորումների և շինությունների ապամոնտաժում,

բ. օգտակար հանաձոյի արդյունահանման հետևանքով խախտված հողատարածքների ռեկուլտիվացիայի ծրագիր,

գ. աշխատուժի սոցիալական մեղմացման ծրագիր,

դ. օգտակար հանաձոյի արդյունահանված տարածքի, հանքավայրի շահագործման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի, դրանց հարակից համայնքների անվտանգության և բնակչության առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման ծրագիր:

ՀԱՆՔԻ ՓԱԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Մշտադիտարկումների նպատակը

Օգտակար հանաձոյի արդյունահանված տարածքի, լցակույտի և դրան հարակից տարածքներում մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռնի ստեղծելու տեղեկատվական հենք փակված հանքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների փոփոխության վերաբերյալ:

Մշտադիտարկումների իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն փակված հանքի երկրաբանական միջավայրի, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների փոփոխության վերաբերյալ:

Դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունը

Դիտակետերի տեղադրումը և մշտադիտարկումների հաճախականությունը յուրաքանչյուր օբյեկտում որոշվում է, ելնելով երկրաբանական, հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների բարդությունից:

Մշտադիտարկումների իրականացման դիտակետեր նախատեսվում է տեղադրել՝

1. Օգտակար հանաձոյի արդյունահանված տարածքում՝ բացահանքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ), ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքը գնահատելու նպատակով:
2. Ռելիեֆի լանջին՝ դեֆորմացիաները գնահատելու նպատակով:
3. Ռեկուլտիվացիայի տարածքում՝ կատարված աշխատանքների արդյունավետությունը գնահատելու համար:
4. օգտակար հանածոների արդյունահանված տարածքի և ռեկուլտիվացված արտադրական լցակույտերի բնահողային հատվածի մշտադիտարկում Մշտադիտարկումների պարբերականությունը տարին մեկ անգամ:

Մշտադիտարկման ձևը՝ տեղագնություն:

Մշտադիտարկումների տևողությունը

Մշտադիտարկումները իրականացվում են 5 տարի տևողությամբ՝ մինչ Երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի հնարավոր աղտոտվածությունը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

ԱՃԽԱՏՈՒԺԻ ՄԵՂՄԱՑՈՒՄԸ

Հանքավայրի շահագործման ընթացքում կամ հանքի փակումից հետո բնակչության վերաբնակեցում չի նախատեսվում:

Արդյունահանման աշխատանքներին մանակցել են 12 մարդ, որոնք ներգրավված են մոտակա համայնքներից:

Շահագործման աշխատանքների ավարտին բոլոր աշխատակիցներին կվճարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամական փոխհատուցում:

Ընկերությունը պարտավորվում է հանքի փակումից հետո՝

- աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով տրամադրել շուրջ 350հազ. դրամ աշխատողների վերավորակավորման և այլ ճյուղերում աշխատանքի տեղավորելու համար:

- հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման նպատակով նախատեսվում է ցուցաբերել

մասնակցություն համայնքի ծրագրերին տրամադրելով շուրջ 100հազ. դրամ:

Նախատեսվող աշխատանքների կատարման ժամկետները՝

1. Խախտված տարածքների ռեկուլտիվացիա – 10օր
2. Արտադրական հրապարակի ապամոնտաժում, սարքավորումների տեղափոխում – 30օր
3. Բացահանքը սպասարկող ավտոճանապարհի, խախտված հողատարածքների վերականգնում-10օր
4. Նախագուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում – 30օր
5. Բացահանքի տարածքի մոնիտորինգ – 5 տարի:

Նյութերի արժեքների և սարքավորումների շուկայական գների փոփոխության հետ զուգընթաց հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվը ենթակա է ինդեքսավորման:

- ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Համաձայն ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների, ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումից հետո, մեկ ամսվա ընթացքում՝ ընկերությունը պետք է վճարի հանքավայրի տարածքի ռեկուլտիվացիայի և մշտադիտարկումների համար հաշվարկված գումարի 15%-ը և ընթացիկ հատկացումները, ինչպես նաև, որպես հանքի փակման աշխատանքների ֆինանսական երաշխիք, անձեռնամխելի գումար կհատկացվի հանքի ֆիզիկական փակման համար (ՀՀ կառավարության 21.10.2021թ-ի N 1733-ն և 10.01.2013թ-ի N 22-ն որոշումներ):

Ֆինանսական երաշխիքը ուժի մեջ է այնքան ժամանակ, մինչև մոնիտորինգի արդյունքները կվկայեն, որ ֆիզիկական փակումը, շրջակա միջավայրի վերականգնումը բավարար են:

Ստորև ներկայացվում է նախահաշվային արժեքների վերահաշվարկը 2021 թ. օգոստոսի 18-ի N 1352-Ն որոշման համաձայն՝ ողջ հանքավայրի համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը իրականացնելու է միայն

ամբողջությամբ շահագործված տարածքի ռեկուլտիվացիա 3573 մ² տարածքի վրա / ընդհանուր տարածքը կազմում է 9985 մ²/

Մարված են մասնակի՝ 1841 մ², որտեղ ռեկուլտիվացի չի իրականացվելու:

Արդյունահանման աշխատանքներ չեն իրականացվել առհասարակ 4571 մ² վրա:

Ողջ հանքավայրի ռեկուլտիվացիայի համար կպահանջվի ըստ վերահաշվարկի 725,85 հազ ՀՀ դրամ, իսկ ընկերության կողմից նախատեսվող 3573 մ² տարածքի ռեկուլտիվացիայի գումարը կկազմի համամասնորեն՝ 259735,81 ՀՀ դրամ:

Խախտված հողատարածքների վերականգնման ծախսերի խոշորացված հաշվարկները նյութերի ծախսի հաշվարկը

Աշխատանքի անվանումը, օգտագործվող սարքավորումը	Ծախսվող նյութի անվանումը	Նյութերի ծախսերը, Լ	Նյութերի արժեքները	
			միավորի արժեքը, դրամ	ընդհանուր արժեքը, հազ. դրամ
Մակաբացման ապարների հարթեցում (բուլդոզերով)	դիզ. վառելիք	785,4	500	392,7
	դիզ. յուղ	39,27	550	21,6
	այլ քսուքներ	56,7	550	31,8
Ընդամենը 323				446,1

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը

Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատանքի տևողությունը, Ժ	Քանակը	1 Ժ աշխատավարձը, դրամ	Աշխատավարձի ֆոնդը, հազ. դրամ
Բուլդոզերավար	21	1	3500	73,5
Ընդամենը	21	1	3500	73,5

Շահագործման ծախսերի նախահաշիվ

Ծախսերի հոդվածները	նորմը%	Չափման միավորը	Գումարը հազ. դրամ
Նյութեր	-	հազ. դրամ	446,1
Աշխատավարձ	-	հազ. դրամ	73,5
Մոց. ապահովման փոխանցումներ	20,5	հազ. դրամ	107,04
Ընդամենը		հազ. դրամ	626,64
Անուղղակի ծախսեր	5,3	հազ. դրամ	33,21
Ընդամենը		հազ.դրամ	659,85

Չնախատեսված ծախսեր	10	հազ.դրամ	66
			725,85
1մ ² մակերեսի վերականգնման աշխատանքների համար անհրաժեշտ ծախսը	-	դրամ	70,47
Վերականգնման աշխատանքների ծախսերը մարվող պաշարների 1մ ³ -ի վրա	-	դրամ	8,26

Հանքի փակման համար անհրաժեշտ ծախսերի նախահաշիվ

Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ. դրամ
<i>Խախտված տարածքների լեռնատեխնիկական վերակուլտիվացիայի համար անհրաժեշտ ծախսը</i>	հազ. դրամ	259,73
Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում	հազ. դրամ	350
Բացահանքի տարածքի մոնիտորինգ /օգտակար հանածոների արդյունահանված տարածքի և ռելիեֆի վնասված արտադրական լցակույտերի բնահողային հատվածի մշտադիտարկում/	հազ. դրամ	250
Նախագրուշացնող, արգելափակող միջոցների տեղադրում	հազ. դրամ	85
Ամբողջը	հազ. դրամ	944,73

Հաշվի առնելով աշխատանքների փոքր ծավալները /վերը նշված հաշվարկները փաստում են/ մշտադիտարկման համար նախատեսված 250 000 ՀՀ դրամը լիովին բավարար է:

Հանքի փակման աշխատանքների շրջանակներում, նախատեսվում են.

Հ ա ն ք ի փ ա կ ու մ

3. Հանքարդյունահանման աշխատանքների ավարտ	<p>1. Հեռացնել տեխնիկա-տրանսպորտային միջոցները և արտադրական սարքավորումները (ՋՏ կայան): Ապամոնտաժել ժամանակավոր կառույցները, դուրս բերել շինարարական աղբը և չօգտագործված նյութերը:</p> <p>2. Ավարտել ռեկուլտիվացման աշխատանքները. հարթեցում</p> <p>3. Հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական մեղմացման ծրագրի ամբողջական կատարում</p> <p>4. Հիմնական ճանապարհների բարեկարգում:</p> <p>5. Հանքի փակման մշտադիտարկման</p>	Փակման ծրագրով նախատեսվող ծախսեր	«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ
--	---	----------------------------------	-----------------------

	պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում		
--	--	--	--

▪ **Նախագծման նորմատիվ-իրավական հենքը**

Մույն գլուխը ներկայացնում է հանքավայրերի շահագործմանը առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը, ներառյալ բնապահպանական քաղաքականությունը, շրջանակային և ճյուղային օրենսդրական ակտերը՝ հողային հարաբերությունների, առողջության և անվտանգության հարցերով:

- **ՀՀ ազգային օրենսդրությունը**
- **Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն**

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի “Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը”:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. “Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր

առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը”:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

▪ **Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք**

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են “Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (29.05.2006 թիվ 750-Ն), որը ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի N1643-Ն որոշմամբ, “Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին” (24.08.2006 թիվ 1277-Ն), “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

▪ “Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով, որը ուժը կորցրած է ճանաչվել շրջակա միջավայրի նախարարի 07.01.2022թ.-ի N6-Ն հրամանով:

Հանքավայրի շահագործման ժամանակ հողատարածքների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն հողային օրենսգրքի պահանջների:

▪ **Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք**

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

- ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմեր”-ով:

Նախատեսվող գործունեության ընթացքում ջուրը սահմանափակ ծավալով օգտագործվելու է ջրցան հրականացնելու, ինչպես նաև աշխատողների կենցաղային կարիքների համար:

- **Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք**

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28 ընդերքի մասին օրենսգրքով:

Հանքարդյունահանման աշխատանքներն անհրաժեշտ է հրականացնել համաձայն այս օրենսգրքի պահանջների:

- ՀՀ կառավարության 14.12.2017թ. N1643-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում:
- **“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014 խմբագրված 2023)**

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և

ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են ելնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են լիազոր մարմին:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

▪ *Ըստ օրենքի 14-րդ հոդվածի ընդերքօգտագործման ոլորտի կապված գործունեությունները ներառված են “Ա” կատեգորիայի մեջ:*

▪ **«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք**

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին:

Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի

պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

Նախագծի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի և ՀԲ պահանջների: Թեկուզ տարածքում պատմամշակութային արժեքներ չեն հայտնաբերվել, անհայտ գտածոների դեպքում գործողությունները պետք է համապատասխանեն օրենքի պահանջներին:

▪ **Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի մասին օրենք**

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

▪ *Հանքավայրի շահագործման համար նախատեսված տարածքներում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:*

▪ **Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք**

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

▪ *Հանքավայրի շահագործման համար նախատեսված տարածքներում վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:*

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

▪ **Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք**

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման,

հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են «Թափոնների մասին» ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

- ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է «Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

Շինարարական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:

- **Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)**

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

Հանքավայրի շահագործման ընթացքում բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

- **Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք**

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006 թ.):

▪ *Հանքավայրի տարածքը չի գտնվում Է հատուկ պահպանվող տարածքում:*

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”:

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”:

Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը սահմանում են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ հողի սանիտարական վիճակի հիգիենիկ գնահատականը, հողի որակի հսկողությունը, հողի սանիտարական վիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝ կախված դրանց ֆունկցիոնալ նշանակությունից, հողի աղտոտվածության աստիճանից կախված հողի օգտագործման առաջարկները:

- Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆN 2.2.4-009-06 հաստատելու մասին”:

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N72-Ն որոշմամբ հաստատված ՀՀ բույսերի Կարմիր Գիրք
- ՀՀ կառավարության 2 նոյեմբերի 2017 թվականի “Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” N 1404-Ն որոշում
- ՀՀ կառավարության 31 հուլիսի 2014 թվականի “Հայաստանի Հանրապետության

բուսական աշխարհի օբյեկտների (այսուհետ՝ օբյեկտներ) պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք ՊՈԱԿ-ի կանոնադրություն
- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,
- «Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 08,09,2011թ 1396-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N967-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 10,01,2013թ N22-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 18,08,2021թ N1352-Ն որոշումը
- ՀՀ կառավարության 11,11,2021թ N1848-Ն որոշումը
- Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, մշակվել են բնապահպանական ուղղվածության բազմաթիվ ռազմավարական, հայեցակարգային և ազգային ծրագրեր, ինչպես նաև ՀՀ կողմից ստորագրվել և վավերացվել են մի շարք միջազգային համաձայնագրեր և կոնվենցիաներ:

Ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

- ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրություններ

NN	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
----	--	------------	--------------	--------------	-------------

1	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		

2	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1993
3	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)	1994	1992	1993	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1993
4	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
5	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրասահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Ժնև, 1979թ.)	1983		1996	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին Ստոկհոլմի կոնվենցիա, 22,05,2001թ	2004	2001	2003	
	Էվոբրֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
6	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրասահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական Էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
7	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1997
8	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրասահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1999
9	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերազրանցվել է, ՄԱԿ, 1999
10	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Գտնվելու վայրը

Ղուրսալի Խաչակապի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի Ղուրսալի 3 տեղամասի տարածքը վարչատնտեսական առումով մտնում է ՀՀ Լոռու մարզի Սպիտակ խոշորացված համայնքի Արջհովիտ բնակավայրի մեջ և գտնվում է Արջհովիտ /Ղուրսալի/ գյուղից շուրջ 0,8կմ, Նոր Խաչակապից շուրջ 2,1կմ և Քարաձորից՝ շուրջ 1,0կմ հեռավորության վրա :

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- Հանքավայրի ամենամեծ երկարություն՝ մոտ 160մ,
- Հանքավայրի ամենամեծ լայնություն՝ մոտ 90մ,
- Օտարման մակերես՝ մոտ 1,03հա,
- Մշակման առավելագույն խորությունը՝ 14մ,

Տեղամասը հարում է Փամբակ գետի ձախափնյա ողողահունին :

ԱԿԽ-ի հատիկային կազմը և ֆիզիկատեխնիկական ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշները և չափման միավորը	Մեծությունը		
		Նվազագույնը	Առավելագույնը	Միջինը հանքավայրում
1	2	3	4	5
1.	Ավազի պարունակությունը %	36,80	42,91	4073
2.	Խճի պարունակությունը %	57,09	63,20	59.27
3.	ԱԿԽ-ի ծավալային զանգվածը բնամասում (կգ/մ ³)	1909	1916	1912
4.	ԱԿԽ-ի ծավալալիրքային զանգվածը (կգ/մ ³)	1612	1620	1616
5.	Փխրեցման գործակիցը	1.18	1.19	1.18

Կոպիճի (5-40 մմ) ֆիզիկամեխանիկական միջին ցուցանիշները

Հ/Հ	Ցուցանիշները (չափման միավորը)	Մեծությունը
1	2	3
1.	Ծավալալիրքային խտությունը փխրուն վիճակում (կգ/մ ³)	1374
2.	Ծավալալիրքային խտությունը խտացված վիճակում (կգ/մ ³)	1518
3.	Չանգվածի կորուստը ջարդելիության փորձարկման ժամանակ (%) 5-10 ֆրակցիա	8,24 8,99

	10-20 ֆրակցիա	
4.	Թույլ ապարների հատիկների պարունակությունը	6,5
5.	Կավի պարունակությունը կոշտերում (%)	0.3
6.	Ջանգվածի կորուստը ջարդելիության փորձարկման ժամանակ (%)	
	5-10 ֆրակցիա	24,14
	10-20 ֆրակցիա	27,04
7.	Ջանգվածի կորուստը՝ 25 փուլ սառեցումից հետո, (%)	8,0
8.	Ջրակլանումը (%)	6,5

Բերված տվյալները վկայում են, որ տեղամասի ԱԿԽ-ից տարանջատված կոպիճն իրենց ֆիզիկամեխանիկական հատկություններով համապատասխանում են Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարները շինարարական աշխատանքների համար՝ 8267- 95 ՀՍ ՊՕՍ-ի պահանջներին:

Ստորև, նկար 1-ում ներկայացված է հանքավայրի տարածքի իրադրային հատակագիծը՝



Նկար 1.

- **Ռելիեֆ, երկրաձևաբանություն**

Տեղամասի շրջանն ունի լեռնային մակերևույթ: Հյուսիսում ձգվում է Բագումի լեռնաշղթան, հարավում՝ Փամբակի լեռնաշղթայի միջին, բարձրադիր մասը (30101մ, Թեժ լեռ) :

Նկար 2.



Շրջանի միջին և հյուսիս-արևելյան մասը գրավում է Փամբակի հովիտը : Բագումի լեռները միջին բարձրության են՝ 2800մ, առավելագույն բարձրությունը Ուրասարն է՝ 2992մ : Լեռնաշղթան երկարավուն, հորստաձև : Այն կազմված է գլխավոր ջրբաժանից, Չքնաղ և Գոգարան լեռնաբազուկներից, որոնք իրարից բաժանվում են Չքնաղ գետի կիրճով :

Փամբակի լեռնաշղթան ձգվում է Շիրակի սարահարթի հյուսիս-արևելյան եզրից մինչև Սևանա թերակղզի (Ջաջուռի լեռնանցքից մինչև Սևանի լեռնանցք)՝ 100 կմ-ից ավելի: Լայնությունը մինչև 16 կմ է: Ամենաբարձր գագաթը Թեժ լեռն է 3101 մ բարձրությամբ, որը գտնվում է լեռնաշղթայի կենտրոնական հատվածում: Բարձր գագաթներից է նաև Մայմեխը: Ունի ծալքաբեկորային ծագում:

Փամբակի գոգհովիտը ձգվում է Ջաջուռի լեռնանցքից մինչև Գայլաձոր կիրճը և ընդգրկում է նաև Չիչխան, Վանաձոր և Տանձուտ գետերի հովիտները :

Բուն տեղամասը գտնվում է Փամբակի գետահովտում, որն Արջուտի պատնեշով բաժանվում է Սպիտակի և Վանաձորի գոգհովիտների:


Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3 և 4-ում:

Հանքավայրի տարածքը սողանքավտանգ չէ: Մոտակա հայտնի սողանքային մարմինը գտնվում է տեղամասից 2.9կմ հարավ-հարավ-արևելք: ՀՀՇՆ II-ի (06.02.20061) համաձայն տեղամասի տարածքը գտնվում է սեյսմիկ 3-րդ գոտում ($\alpha = 0.4g$):


▪ *Շրջանի կլիման*

Շրջանում ներկայացված են տարբեր կլիմայական տիպեր, որը պայմանավորված է լեռնային կտրտված ռելիեֆով: Ընդհանուր առմամբ կլիման բարեխառն է, հունվարի միջին ջերմաստիճանը՝ -6°C մինչև -12°C , հուլիսինը՝ $10-18^{\circ}\text{C}$, տարեկան տեղումների քանակը 550-700մմ: Ձմեռը տևական է, ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Տարածքի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ստորև աղյուսակ 1-4-ում ըստ մոտակա Սպիտակ օդերևութաբանական կայանի տվյալների:


Նկար 5-ում բերված է կլիմայական գոտիների տարածման սխեմատիկ քարտեզը:



Նկար 3.



Նկար 4.



Նկար 5.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Կայանի բարձրություն ծովի մակարդակից, մ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
1552	-4,4	-3,4	0,4	6,7	11,5	14,6	17,6	17,9	14,2	9,0	3,3	-1,9	7,1	-25	36

Օդի հարաբերական խոնավությունը

Օդի հարաբերական խոնավությունը, %														
Ըստ ամիսների												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա

71	72	72	68	72	73	71	70	70	71	73	72	71	63	51
----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 3.

Մթնոլորտային տեղումները և ձնածածկը


Տեղումների քանակը, մմ միջին ամսական/առավելագույն տարեկան													Ձնածածկույթ		
Ըստ ամիսների												Տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր				
15	18	25	48	77	77	45	35	31	41	27	16	455	56	40	72
20	21	23	57	83	39	53	54	25	34	24	28	83			

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊ ա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
		Ուղղությունները											
		Հս	Հս- Արլ	Արլ	Հվ- Արլ	Հվ	Հվ- Արմ	Արմ	Հս- Արմ				
844,0	հունվար	1	1	10	1	1	9	62	15	17	4,1	3,4	47
		3,6	4,1	4,4	4,7	4,9	4,6	4,2	4,3				
	ապրիլ	2	6	36	2	5	14	29	6	28	3,2		
		3,2	3,2	4,7	3,7	4,4	4,6	4,1	3,3				
	հուլիս	1	12	79	3	1	1	2	1	23	4,0		
		3,4	4,7	4,6	4,7	3,1	4,0	3,1	2,9				
	հոկտեմբեր	1	5	42	1	2	12	32	5	41	2,5		
		2,9	2,8	4,2	3,7	2,4	4,0	3,4	3,1				

▪ **Մթնոլորտային օդ**

Մթնոլորտային օդի մոնիտորինգի մոտակա դիտակայանը գտնվում է Վանաձոր քաղաքում: Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է ակտիվ նմուշառման երեք դիտակայան և պասիվ նմուշառման 24 դիտակետ (նկար 6):



Նկար 6.

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության աշխատակազմի «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալների՝ 2022 թվականի առաջին եռամսյակում Վանաձոր քաղաքի ստացիոնար դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 747, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 575 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հունվար և փետրվարամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5 անգամ, մարտին՝ 1.4 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվար և փետրվար ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.7 անգամ, մարտին՝ 1.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ժամանակավոր առաջարկություններ «Անասկար ելույթերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

▪ **Ջրային ռեսուրսներ**

Տարածքի խոշորագույն ջրային երակը Փամբակ գետն է՝ Դեբեդի հիմնական վտակը: Գետի ակունքը Ջաջուռի թամբոցի արևելյան լանջի աղբյուրն է, որը գտնվում է Շիրակի և Փամբակի լեռնաշղթաների հատման մասում: Գետի ավազանը 1370 քվմ է: Գետահովիտն ընդարձակ կիրճ է, որը գետաբերանի հատվածում փոխվում է խորը կանիոնի: Առավել խոշոր վտակը Գետիկն (Չիչխան) է, որը Փամբակ գետ է թափվում գետաբերանից 52 կմ հեռավորության վրա:

Ստորև բերվում են Փամբակ գետի բազմամյա միջն տարեկան հոսքի բնութագրերը, միջին տարեկան առավելագույն և նվազագույն ծախսերը:

Աղյուսակ 5.

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրություն ը, մմ	Հոսքի գործակից ը
Փամբակ	8.96	283	8.37	264	0.42

Աղյուսակ 6.

Գետը	Միջին տարեկան ծախսը, մ ³ /վ	Առավելագույն ծախսը, մ ³ /վ	Նվազագո ւյն ծախսը, մ ³ /վ
Փամբակ	12.0	166	3.8


«Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի իրականացնում է Փամբակ գետի ջրերի որակի մոնիթորինգի Սպիտակ քաղաքից ներքև հատվածում և Վանաձոր քաղաքից վերև հատվածում: Փամբակ գետի Սպիտակից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում փետրվար, մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:


Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի արդյունքների համաձայն ՀՀ գետերի ակունքներում և բնակավայրերից վերև ընկած հատվածներում ջրի որակը

«լավ»-ից «անբավարար» որակի է (2-4-րդ դաս): Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի՝ գետին խառնվելու արդյունքում դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և

նիտրիտ իոններով: Հատկապես աղտոտված է Փամբակ գետը՝ Վանաձոր քաղաքից հետո, Ախուրյան գետը՝ Ամասիա գյուղից հետո և Գյումրի քաղաքից հետո, Կարկաչուն գետը՝ գետաբերանի հատվածում, Մեծամոր գետը՝ Վաղարշապատ քաղաքից հարավ հատվածում, Քասախ գետը՝ Ապարան քաղաքից հետո, Գետառ գետը՝ գետաբերանի հատվածում, Հրազդան գետը՝ Երևան քաղաքից հետո մինչև գետաբերանն ընկած հատվածում, Մարմարիկ գետը՝ գետաբերանի հատվածում, Վարարակ գետը՝ Գորիս քաղաքից ներքև հատվածում:



Գծապատկեր 1. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ամոնիում իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.




Գծապատկեր 2. Կոմունալ-կենցաղային կեղտաջրերով աղտոտված հիմնական գետերում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիան 2021-2022 թթ.


ՀՀ մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):


ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին




ՀՀ ջրամբարների ջրի որակի նկարագիրը 2022 թվականին (դիտակետերի ընդհանուր թիվ՝ 6)



Գծապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական




Աղյուսակ 1. Գետերի ջրի որակը 2022 թվականին

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային ռեսուրս	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի բնութագրիչ	Ջրի կարգավիճակի դասը ստա ֆիզիկաքիմիական բնութագրիչների	Ջրի կարգավիճակի ընդհանրական դասը ստա ֆիզիկաքիմիական բնութագրիչների
Հյուսիսային	Փամբակ	0.5 կմ գ. Խնկոյանից վերև (1)	Երկաթ, ալյումին	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Կայցիում, ՇԱԱ, ՀՀԱ	3-րդ	4-րդ
			Նիտրատ իոն	4-րդ	
		1 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն, ՀՀԱ, ԿՉՆ	3-րդ	3-րդ
		0.5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	Նիտրատ իոն, մոլիբդեն, ՀՀԱ, ԿՉՆ	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն	5-րդ	

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք


Փամբակ գետի ջրի որակը Խնկոյան գյուղից վերև և Վանաձոր քաղաքից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)։ Խնկոյան գյուղից վերև հատվածում՝ պայմանավորված երկաթով և ալյումինով, Վանաձոր քաղաքից վերև՝ նիտրատ իոնով, ընդհանուր լուծված աղերով և կախության չոր նյութերով։ Սպիտակ քաղաքից ներքև հատվածում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով։ Վանաձոր քաղաքից ներքև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է

«վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում իոնով։



Գծապատկեր 4. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



▪ **Հողեր**

Նկարագրվող տարածքը հանդիսանում է Գուգարքի ֆիզիկաաշխարհագրական շրջանի մի մասը: Ղուրսալ-3 տեղամասի տարածաշրջանում զարգացած են լեռնամարգագետնային, մարգագետնատափաստանային, գորշ անտառային, դարչնագույն անտառային հողերը, սևահողերը, ինչպես նաև

գետահովտադարավանդային հողերը (նշված տիպերի բաշխվածությունը բերված է նկար 7-ում):

Լեռնամարգագետնային հողերը ունեն լավ արտահայտված նուրբ հատիկավոր ստրուկտուրա, աղքատ են կարբոնատներից: Պարունակում են մեծ քանակության հումուս (18-25, երբեմն 25-30%): Հողաշերտի հզորությունը փոքր է, կախված ռելիեֆի պայմաններից հզորությունը տատանվում է 15-20-ից 40-50սմ-ի սահմաններում: Մեխանիկական կազմը հիմնականում կավավազային է, հողային լուծույթի ռեակցիան թթվային է, pH տատանվում է 4.5-6.4-ի սահմաններում: Լեռնամարգագետնային հողերը բնորոշվում են մակերեսային և խորքային թաղված ուժեղ քարքարոտությամբ:

Մարգագետնատափաստանային սևահողանման հողերը պարունակում են մեծ քանակությամբ հումուս (9-10, մինչև 18%), ունեն լավ արտահայտված հատիկակնձկային ստրուկտուրա, կավավազային մեխանիկական կազմ, հզոր են կամ միջակ հզոր: Այս հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները հետևյալն են.

Աղյուսակ 7.

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը , սմ	Հումուսը , %	Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվա ծքում	Հիդրոլիզային թթվությունը, մ/էկվ 100գ հողում
1	2	3	4	5	6
Սևահողանման մարգագետնատափաստանային	0-5	18.1	49.3	6.2	4.6
	5-14	10.8	49.4	6.7	8.0
	14-27	7.8	44.7	6.7	7.5
	27-40	5.8	28.6	6.8	4.6
	40-61	2.0	22.7	6.8	2.7
	61-82	0.8	21.5	6.9	1.6
	82-120	0.4	22.0	7.0	1.4

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Գորշ անտառային հողերն իրենց ամբողջ պրոֆիլում ունեն գորշ դարչնագույն գունավորում, ծագումնաբանական հորիզոնների թույլ տարբերակում, ընկուզանման կամ ընկուզակնձկային ստրուկտուրա:

Լեռնային գորշ անտառային հողերում հումուսի պարունակությունը կազմում է 7-12%: Հումուսի բաղադրությունում ֆուլվոթթուները գերակշռում են հումինաթթուներին: Ռեակցիան չեզոք է կամ թույլ թթվային, կլանման տարողությունը բարձր:


Աղյուսակ 8.

Գորշ անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Խորություն ը, սմ	Տոկոսներով		Կլանված հիմքերի գումարը, մ/էկվ 100գ հողում	Հիդրոլիզայի ն թթվությունը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքո ւմ
	հումուս	ընդհանուր ազոտ			
4- 13	6.6	0.29	27.9	4.3	5.1
13-38	2.6	0.18	14.8	5.8	3.8
38-62	0.7	0.10	17.9	4.6	3.9
62-91	0.4	-	10.9	2.2	4.2
91-103	0.4	-	8.7	0.8	5.5

Լեռնաանտառային գոտու դարչնագույն անտառային հողերը ձևավորվել են 700-1700մ բարձրությունների սահմաններում, կիրճերով, ձորակափոսորակային ցանցով խիստ կտրտված ռելիեֆի պայմաններում: Այս հողերը նկարագրվող շրջանում հանդես են գալիս լվացված և կարբոնատային ենթատիպերով: Դարչնագույն հողերը բնութագրվում են դարչնագույն և մուգ-դարչնագույն գույնով, հումուսի բավական բարձր պարունակությամբ (10-14%), որը խորության ուղղությամբ արագ նվազում է: Հումինային նյութերում հումինաթթուների և ֆուլվոթթուների քանակը գրեթե հավասար է:

ՀՈՂԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՔԱՐՏԵԶ



- 1 Լեռնամարգագետնային թույլ-ճմային խորքային-չհագեցած փոքր հզորության կավավազային
- 2 Լեռնամարգագետնային թույլ-ճմային խորքային-չհագեցած փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- 3 Մարգագետնատափաստանային տիպիկ քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ հողմահարված
- 4 Մարգագետնատափաստանային տիպիկ քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 5 Մարգագետնատափաստանային տիպիկ քարքարոտ փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- 6 Գորշ անտառային չհագեցած քարքարոտ միջին հզորության կավավազային թույլ և միջին հողմահարված
- 7 Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային միջին հողմահարված
- 8 Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված փոքր հզորության կավավազային միջին հողմահարված
- 9 Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային մշակովի
- 10 Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- 11 Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 12 Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- 13 Սևահողեր լվացված թույլ հումուսային հզոր կավային մշակովի
- 14 Սևահողեր լվացված թույլ հումուսային փոքր հզորության կավային մշակովի
- 15 Սևահողեր լվացված քարքարոտ թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 16 Սևահողեր լվացված քարքարոտ թույլ հումուսացված փոքր հզորության կավավազային միջին և ուժեղ հողմահարված
- 17 Սևահողեր լվացված քարքարոտ թույլ հումուսային միջին հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- 18 Սևահողեր սովորական արևկարբոնատային թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- 19 Սևահողեր սովորական արևկարբոնատային թույլ հումուսային փոքր հզորության կավավազային միջին և ուժեղ հողմահարված
- 20 Սևահողեր սովորական արևկարբոնատային թույլ հումուսային փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- 21 Սևահողեր սովորական արևկարբոնատային թույլ հումուսային կավավազային թույլ հողմահարված մշակովի
- 22 Սևահողեր սովորական գլաբրային թույլ հումուսացված միջին հզորության կավավազային մշակովի
- 23 Սևահողեր սովորական քարքարոտ միջին հզորության կավավազային մշակովի
- 24 Գետահովտադարավանդային մարգագետիններ գլաբրային փոքր հզորության ավազակավային

Նկար 7.

Այս տիպի հողերը ունեն գլխավորապես կավավազային մեխանիկական կազմ: Կլանման տարողությունը բարձր է, կլանված կատիոններում գերակշռողը Ca-ն է: Ռեակցիան չեզոք է կամ թույլ հիմնային: Բնութագրվում են բարելավ ֆիզիկական և ջրաֆիզիկական հատկություններով, լավ արտահայտված ստրուկտուրայով:

Սևահողերում առանձին ծագումնաբանական հորիզոնների քիմիական բաղադրությունը, մասնավորապես սիլիցիումի, ալյումինիումի, երկաթի, կալիումի պարունակության տեսակետից առանձնապես խիստ չի տարբերվում, նկատվում է դրանց հավասարաչափ կուտակում հողի պրոֆիլի սահմաններում:

Դարչնագույն անտառային հողերի քիմիական ու ֆիզիկաքիմիական հատկությունները

Հողատիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուսը, %	CO ₂ , %	Կլանված կատիոններ ընդհանուրը, մ/էկվ 100գ հողում	pH-ը ջրային քաշվածքում
Լվացված դարչնագույն անտառային	0-10	14.1	չկա	40.3	6.6
	10-26	3.7	չկա	39.1	6.7
	26-49	2.2	չկա	33.4	6.5
	49-64	1.4	չկա	38.6	6.8
	64-85	1.4	չկա	37.6	7.7
	85-107	0.8	չկա	38.9	7.3
Կարբոնատային դարչնագույն անտառային	2-16	10.8	1.9	22.8	7.8
	16-31	4.5	5.2	15.6	8.0
	31-43	2.5	7.5	17.0	7.5
	43-120	1.2	8.9	19.8	7.9

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է (pH-ը տատանվում է 7-ի սահմաններում): Կլանող համալիրը հագեցված է հիմնականում Ca-ով և Mg-ով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա: Հարուստ են ընդհանուր ազոտով (0.15-0.35%), ֆոսֆորական թթվով (0.15-0.26%) և կալիումով (1-2%):

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողայն լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ

չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:


Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն:

▪ ***Քուսական և կենդանական աշխարհ***

Ղուրսալ-3 տեղամասի շրջանի բուսածածկույթի համակեցու- թյունները անտառներն են և մարգագետնային տափաստանային տեսակները: Անտառային բուսածածկը ներկայացված է հաճարենու և կաղնու, իսկ դաշտավայրային հատվածներում՝ հացազգի տարախոտային և մարգագետնատա- փաստանային խմբակցություններով (նկար 8): Անտառային բույսերից են հաճարենին, կաղնին, հացենին, լորենին, թխկին, բոխին, ժայռոտ քարափներում տարածված են մասրենու և ցաքու թփուտներ, դաժու և գիհու նոսրանտառներ: Լեռների բարձրադիր գոտներում իրար են հերթափոխում ենթաալպյան և ալպյան խմբակցություններ: Ընդհանուր առմամբ շրջանում տարանջատվում են բուսականության հետևյալ տիպերը.

1. ցածրադիր ալպիական հատիկաբուսային և տարախոտային մարգագետիններ՝ *Bromopsis, Hordeum, Betonica, Myosotis, Cephalaria* տեսակների մասնակցությամբ,
2. լայնասաղարթ հաճարենու և կաղնու-բոխու անտառներ,
3. տափաստանային տարախոտային և հացազգային բուսականություն՝ *Festuca, Koeleria, Stipa, Galium* և այլ տեսակների մասնակցությամբ:

Հայցվող տարածքում համատարած բուսական ծածկույթը բացակայում է, առանձին կղզյակների տեսքով հանդիպում են Հայաստանի խոնավ տարածքների բնորոշ, լայն տարածում ունեցող *Poaceae, Brassicaceae, Carex* և *Galium* ընտանիքների/ցեղերի ներկայացուցիչները: Տարածքի սահմաններից դուրս, դեպի հյուսիս՝ երկաթգծին հարակից մասում առկա են թփուտներ վայրի տանձենի, մասրենի, ցաքի, ուռենի: Առանձին ծառեր աճում են նաև Փամբակ գետի հունին հարակից հատվածում (նույնպես տարածքից դուրս):



Նկար 8.

Տարածաշրջանում հանդիպում է Ասպլեն Վորոնովի- *Asplenium woronowii* Christ բույսերի Կարմիր գրքում գրանցված տեսակը: Կատեգորիա EN B1 ab (iii)+2ab (iii), վտանգված տեսակ, հայտնի է 3 աճելավայրերից, ընդ որում մեկը գտնվում է զգալի հեռավորության վր: Տարածման շրջանի մակերեսը 5000քառ կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500քառ կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված ճեր: Ընդգրկված չէ նաև CITES և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում:

Տեղամասի շրջանի կենդանական աշխարհը ներկայացված է լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհին բնորոշ տեսակներով. կրծողներ (դաշտամուկը, ճագարամուկը), գետնասկյուռ, գորշ գայլ, աղվես: Թռչուններից տարածված են բադը (*Anatidae*), գորշ կաքավը (*Perdix cinerea*), ճնճղուկը (*Passeridae*), լորը (*Coturnix*), կաքավը (*Perdix*), արտույտ անտառային (*Lullula arborea*), ծիծեռնակը (*Hirundinidae*), կաչաղակը (*Pica*), արծիվը (*Aquila*), բազեն (*Falco*) և այլն: Սողուններ գրեթե չեն հանդիպում: Լայն տարածված է սովորական իտալական ծղրիդը, իրիս աղոթարարը: Երկկենցաղներից հանդիպում են սովորական դողոշը և փոքրասիական գորտը, որոնք հանդիսանում են լայն տարածված տեսակներ:

Փամբակ գետի ջրերում հանդիպում է կողակ, սովորական քառթակ, արագաշարժ:

Վերգետնյա կենսակերպ ունեցող և գետնափոր կենդանիների բներ չեն հայտնաբերվել: Տարածքի հարակից հատվածում, որը ծածկված է ուռենու և մասրենու թփուտներով, նկատվել են ճնճղուկի և կաչաղակի բներ:

▪ ***Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ***

Ղուրսալ-3 ԱԿԽ տեղամասի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Տեղամասից 11,3կմ հյուսիս-հյուսիս-արևելք գտնվում է

«Գյուլագարակ» պետական արգելավայրը, իսկ մոտ 19կմ հարավ-հարավ-արևելք՝ Հանքավանի ջրաբանական պետական արգելավայրը :

Ղուրսալ-3 ԱԿԽ տեղամասի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն արձագրվել:

ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակներից տեղամասի շրջանում հայտնի են.

- գազ կիսալուսնաձև - կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, որի միակ աճելավայրը հայտնի է Վանաձոր քաղաքի արվարձանում՝ տեղամասից շուրջ 17կմ հեռավորության վրա,

- կուկուրան հիասքանչ – վտանգված տեսակ է, աճում է Սպիտակ քաղաքի մոտայայքում, տեղամասի մոտ 5,7կմ հեռավորության վրա,

- սագասոխուկ դեղին – վտանգված տեսակ է, հանդիպում է Վանաձորի շրջակայքում, շուրջ 17կմ հեռավորության վրա:

Վանաձոր քաղաքի շրջակայքից (մոտ 17կմ հեռավորության վրա) հայտնի է ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված Սանրաբեղ չրիկանը, *Ctenicera pectinicornis*, կարգավիճակը՝ սահմանային արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես Խոցելի VU B1b: Փամբակ գետի հովտով անցնում է ՀՀ կենդանիների կարմիր գրքում որպես վտանգված տեսակ գրանցված Ռոստոմբեկովի մողեսի արեալի սահմանը: Նշված տեսակը հանքավայրի տարածքում չի արձանագրվել, քանի որ տարածված է առավելապես անտառային գոտում:

ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը:

Բնության հուշարձաններից Լոռու մարզի տարածքում հաշվառված են.

ՀՀ Լոռու մարզ			
«Տագավտանանս ապարների (Նիսպագների) գոլավոր դայք»	Ալավերդի քաղաքային համայնք, Լավար գետի միջին հոսանք, կիրճի աջ ափին՝ Դարկ լեռնագագաթի հարավ-արևելյան ստորոտին, Ալավերդի «Լեհանքեր» ավտոճանապարհից մոտ 300 մ դեպի արևմուտք, Մադան գյուղի արևմտյան ծայրամասից մոտ 500մ դեպի արևմուտք	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Գետնանձավ» անձավային թունեղ	Լոռի բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Ձորագետի հրային ներծայթուկ»	Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ.
«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում	Երկրաբանական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Թռչկան» ջրվեժ	Մեծ Դառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա	Ջրագրական հուշարձան	09.11.2012թ. N 293-Ն
«Դսեղի Մովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Մովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի ափսեաձև զոգավորությունում	Ջրագրական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Օձի պորտ»	Արդվի գյուղական համայնքի արևելյան մասում, Հովան Օձունեցու կայտղիկուսի մատուռից 120մ հյուսիս-արևմուտք	Բնապատմական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Շամլուղի լճակ»	Շամլուղ գյուղական համայնք	Ջրագրական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
«Քոշաքարի մրտավարդ»	Մարգահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառնտնտեսության Եղեգնուտի անտառապետության բարձրադիր գոտում	Կենսաբանական հուշարձան	05.08.2014թ. N 218-Ն
Ընդամենը՝ ՀՀ Լոռու մարզում - 9		Երկրաբանական - 4 Կենսաբանական - 1 Ջրագրական - 3 Բնապատմական - 1	9

Նշված բնության հուշարձանները գտնվում են հանքավայրից 12-ից 41կմ հեռավորության վրա և, հետևաբար, ծրագրավորված աշխատանքները որևիցե կերպ չի անդրադառնա բնության հուշարձանների իրավիճակի վրա:

ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 14 հուշարձան (11 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Բնակատեղի	Ք.ա. 2 հզ	քաղաքի հս-աե մասում, Փամբակ գետի ձախ ափին, այրաղաց կոմբինատի դիմաց
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հզ	կոմբինատի տարածքում և շրջակայքում
Բնակատեղի «Մարդարի բլուր» («Մարդարի կոնդ»)	Ք.ա. 3-1 հզ	քաղաքի ամ մասում
Գերեզմանոց	19-20 դդ.	Շահումյան փող.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Գերեզմանոց	19-20 դդ.	N 1 դպրոցի մոտ
Տապանաքար	1841 թ.	
Գյուղատեղի «Բակեր»	Ք.ա. 4-3 հզ, 15-16 դդ.	քաղաքի հվ մասում
Գերեզմանոց	15-16 դդ.	
Դամբարանաբլուր	Ք.ա. 3 հզ, 2 կես	Մպիտակ-Վանաձոր ճանապարհի ձախ եզրին
Եկեղեցի	2001 թ.	քաղաքի մեջ
Կամուրջ	19 դ.	քաղաքի մեջ, ավտոկայանից ոչ հեռու
Հուշարձան՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	քաղաքային զբոսայգում
Հուշարձան Ալ. Մյասնիկյանի	1966 թ.	N 1 դպրոցի բակում
Հուշարձան Դ. Տեր-Սիմոնյանի	1965 թ.	N 2 դպրոցի բակում

ՀՀ [Լոռու մարզի Արջահովիտ](#) գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է Հայաստանի կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 6 հուշարձան (4 միավոր):

հուշարձան	կառուցված	վայր, հասցե
Բնակատեղի	Ք.ա. 3-2 հզ	Փամբակ գետի ձախ ափին, կամրջից 10 մ հս
Դամբարան Հայ և ռուս զինվորների	19 դ.	երկաթուղու մոտ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հզ	գյուղի հս մասում
Եկեղեցի Սբ. Գևորգ	6 դ. առաջին կես	գյուղի հս-ամ մասում
Գերեզմանոց	միջնադար	եկեղեցու մոտ
Թնավոր խաչ	13 դ.	

Փակման նպատակով հայցվող տեղամասի և նշված հուշարձանների միջև հեռավորությունը կազմում է նվազագույնը 1,5կմ:

Հաշվի առնելով փակման աշխատանքների մեթոդաբանություն կարելի է փաստել, որ ավագակոպճային խառնուրդի տեղամասի փակումը չի կարող բացասաբար անդրադառնալ հուշարձանների իրավիճակի վրա:

Աղմուկի մակարդակ և թրթռում

Ներկայացվող տեղանքում աղմուկի աղբյուր կարող են հանդիսանալ միայն ավտոտրանսպորտային միջոցները, սակայն, քանի որ դրանց երթևեկության ինտենսիվությունը շատ ցածր է, կարելի է ենթադրել, որ աղմուկի մակարդակը նույնպես բարձր չէ:

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմերով:

Աղմուկի առավելագույն թույլատրելի ցուցանիշները ըստ այդ բերված են աղյուսակում

ՀՀ սահմանված աղմուկի նորմերը

Աղմուկի առավելագույն թույլատրելի մակարդակը

Ընկալիչ	Ժամերը	dBL _{AEQ}	dBL _{AMAX}
Բնակելի և հասարակական կան շենքերի մոտ	06:00-22:00	55	70
	22:00-06:00	45	60

Արդյունահանման աշխատանքների ընթացքում օգտագործվող տեխնիկան շահագործելիս առաջանում է աղմուկ: Աշխատանքային հրապարակում առաջացող աղմուկի նվազեցման նպատակով մեքենաները պետք է սարքավորված լինեն ձայնախլացուցիչներով:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր Արջհովիտ բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներն են՝ բացահանքի տարածքում կատարվող փակման նպատակով ռեկուլտիվացման աշխատանքները, թափոնների բարձման և տեղափոխման աշխատանքները, ճանապարհներին տրանսպորտի տեղաշարժը:

Հանքավայրում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 65դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր - ΔLAկանաչ քանաձևով, որտեղ՝
LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ,
ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և
աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, ΔLAհեռ
կազմում է 20դԲԱ,
ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք),

ΔLAէկր =10դԲԱ,

ΔLAկանաչ-աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով,

ΔLAկանաչ=5դԲԱ:

Աղմուկի մակարդակը Արջհովիտ գյուղի մոտ կկազմի՝

Laտար = Laէկվ - ΔLAհեռ - ΔLaէկր -ΔLaկանաչ = 65-20-10-5= 30դԲԱ (նորման
45դԲԱ):

Գիշերային ժամերին աշխատանքներ Արջհովիտի հանքավայրի
սահմաններում չեն կատարվելու:

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու
է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է
տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների
աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z
առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ: Հանքի
տարածքում գործարկվող մեքենաներից առաջացող թրթռումները չեն գերազանցելու
85դԲԱ մակարդակը:

Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն (ՀՀՇՆ 31-04.01-2024) սանիտարական նորմերի, ավազի
հանքավայրերի համար սանիտարապաշտպանիչ գոտու մեծությունը կազմում է
100.0մ:

Քանի որ մոտակա բնակավայրը գտնվում է ավելի մեծ հեռավորության
վրա՝ նվազագույնը 0.8կմ, ուստի հաստուկ միջոցառումներ չեն նախատեսվում:

Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի 64-ն
որոշման պահանջներով:

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը), տարածքը՝ 3799 քառ. կմ, ամենամեծը հանրապետության հյուսիսային մարզերից: Այն հանդիսանում է հանրապետության հյուսիսային դարպասը, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արեւելքից՝ Տավուշի, արեւմուտքից՝ Շիրակի, հարավից՝ Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մարզն ընդգրկում է նախկին Գուգարքի, Ստեփանավանի, Սպիտակի, Թումանյանի, Տաշիրի տարածաշրջանները:

Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ եւ ունի ոչ հարթ ռելիեֆ եւ տարածքի մոտ 80% զբաղեցնում են լեռնաշղթաները եւ խոշոր լեռները: Նրա տարածքում են ձգվում Ջավախքի, Բագումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները եւ Լոռվա ձորը: Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը (154կմ երկարությամբ, 2-րդը հանրապետությունում)՝ իր Ձորագետ, Մարցագետ եւ Փամբակ վտակներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում: Հարուստ է հանքային աղբյուրներով: Բնակավայրերը գտնվում են ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա:

Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին եւ բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տեւական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Օդի միջին ջերմաստիճանը տատանվում է ձմռանը -4.8°C -ից մինչեւ $+18^{\circ}\text{C}$ ամռանը: Ի տարբերություն Շիրակի եւ Տավուշի մարզերի, այստեղ տեղումների քանակը բավականին մեծ է, տարեկան դիտարկվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարեւադարձային է, չափավոր շոգ եւ չորային ամառներով, մեղմ ձմեռներով:

Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները: Անտառային պետական ֆոնդը կազմում է 101.205հա, որից անտառածածկ է 86հազ. հա-ն: Անտառային ֆոնդը կազմում է

մարզի տարածքի մոտ 27%-ը, հանրապետության անտառային ծածկույթի 30%: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենին, կաղնին, բոխին և սոճին, իսկ ոչ հիմնական տեսակները՝ լորենին, կեչին, թեղին, հացենին: Անտառածածկ տարածքները ընդգրկում են Թումանյանի, Ստեփանավանի և Գուգարքի տարածաշրջանները:

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 251052.7հա (Մարզի տարածքի 66% և հանրապետության գյուղնշանակության հողերի 12.3%), որից՝ վարելահողեր 42089.4հա (16.8%), բազմամյա տնկարկներ՝ 420.7հա (0.2%), խոտհարքներ՝ 35110.4հա (14.0%), արոտավայրեր՝ 145650.5հա (58%), այլ հողատեսքեր՝ 27781.6հա (11.0%): Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 9612.1հա (22.8%), որոնք հիմնականում գտնվում են Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում:

Մարզում առկա են 3 արգելավայրեր («Գյուլագարակի», «Մարգահովիտի», «Կովկասյան մրտավարդի»), ընդհանուր՝ 17576հա մակերեսով, 2 բուսաբանական այգի: Անձնագրավորված են 9 բնության հուշարձան՝ 165հա ընդհանուր մակերեսով:

Մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում: Լոռվա լեռների հարստությունը համարվում է հիմնականում փայլուն պղինձը, որը առանձնանում է իր բարձր որակական հատկանիշներով: Օգտակար հանածոները ներկայացված են ինտրուզիվ ծագման երեսապատման քարերով, ավազակոպճային խառնուրդով, բազալտներով, իսկ գունավոր մետաղական հանածոներից են նաև արծաթը, մոլիբդենը, ոսկին (շահագործվում է Թեղուտի, Շամլուղի պղնձի հանքավայրը, Մղարթի եւ Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Մարզի ողջ տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում (3-ից 1-ին գոտիականության): Հատկապես մարզի կենտրոնական մասը իր Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան քաղաքներով առավել զգայուն են սպասվելիք 9 և ավելի ուժգնությամբ երկրաշարժերին: Թերևս դա էր պատճառը, որ 1988թ-ին Սպիտակում տեղի ունեցած երկրաշարժը ավերեց տարածաշրջանը և լուրջ վնասներ հասցրեց մարզի տնտեսությանը:

Մարզում զգալի տարածում ունեն նաև սողանքները, որոնք ներկայացնում են ինչպես առանձին վտանգ, այնպես էլ մեծացնում են սեյսմիկ ռիսկը: Մասնավորապես՝ Փամբակի լեռնաշղթայի Վանաձոր քաղաքին հարող լանջերը, քաղաքի գրեթե ամբողջ երկարությամբ, սողանքավտանգ են:

Լոռին առանձնահատուկ է իր գեղատեսիլ բնությամբ եւ հարուստ պատմամշակութային ժառանգությամբ եւ համարվում է հայաստանյան զբոսաշրջության ամենագրավիչ անկյուններից մեկը: Այստեղ են գտնվում 3000-ից ավելի հուշարձաններ ու կոթողներ, այդ թվում հայաստանյան խոշորագույն եւ նշանավոր Սանահինի եւ Հաղպատի վանական համալիրները, որոնք ընդգրկված են ՅՈՒՆԵՍԿՈ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Լոռու մարզի մշտական բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 225.0 հազար մարդ (հանրապետության բնակչության 7.5%-ը), այդ թվում՝ քաղաքային 132,8 հազար մարդ (59,0 %), գյուղական՝ 92.2 հազար մարդ (41.0 %), կամ 2001թ-ի դրությամբ նվազել է 61 408-ով (21.4%): 2015թ արդյունքներով ՀՀ Լոռու մարզի մշտական բնակչության թվի տեսակարար կշիռը Հանրապետության ընդհանուր թվում կազմել է 7.5%, այդ թվում քաղաքային բնակչությունը՝ 7.0%, գյուղական բնակչությունը՝ 8,4%:

Լոռու մարզի ազգաբնակչության 97% հայեր են, մարզի 89 համայնքներում բնակվում են ռուս (1.5%), հույն (1.0%), եզդի, քուրդ, ասորի, և այլ ազգերի (0.5%) ներկայացուցիչներ: Քաղաքային համայնքներում բնակվում են 2937 (2.2%), իսկ գյուղական համայնքներում՝ 3245 (3.5%) ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Լոռու մարզի մրցակցային առավելությունն է դեպի Վրաստան տանող երկու միջպետական՝ M6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման եւ M3 Վանաձոր-Ստեփանավան-Տաշիր-Վրաստանի սահման ավտոճանապարհները եւ մարզի տարածքով անցնող Հայաստանը Վրաստանին կապող երկաթգիծը: Գործող օդանավականներ չկան:

Լոռու մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից, այն է՝ “Արմենթել” ՓԲԸ (Beeline ապրանքանիշ), “Ղ-Տելեկոմ” ՓԲԸ (Վիվա սելլ / USU

ապրանքանիշ) և «ՅՈՒՔՈՄ» (Ucom ապրանքանիշ)։, իսկ վերջին 3 տարում ինտերնետ ծառայություն ևս 3 մասնավոր ընկերություններ։ Մարզի բոլոր քաղաքներն ապահովված են 3G կապով, 3G բջջային կայանները՝ օպտիկամանրաթելային կաբելային գծերով։ «Արմենթել» ՓԲԸ-ն Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ։

ՀՀ փոստային կապի «Հայփոստ-թրաստ» ԲԲԸ Լոռու մարզի 137 փոստային մասնաճյուղերը ապահովելում են մարզի համայնքների 100 տոկոս ծածկույթը։

ՀՀ Լոռու մարզում եթերային հեռուստահաղորդումներն իրականացվում են «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ կողմից, ապահովելով մարզի բնակավայրերի 80% ծածկույթը եւ մարզի բնակչության 86.9%:

Լոռու մարզի ամբողջ տարածքն ընդգրկվել է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում։ Հեռարձակվում է հանրապետական եւ օտարերկրյա թվային 8 հեռուստաընկերությունների հաղորդումներ, մարզային «Ֆորտունա TV», գործում են 6 տեղական հեռուստաընկերություններ։ Մարզկենտրոնում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ։

Տեղական ռադիոցանց ունեն Վանաձոր եւ Սպիտակ համայնքները։

Լոռու մարզի ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը կազմում է 891.1կմ, այդ թվում՝

*միջպետական նշանակության՝ 218.9 կմ,

*հանրապետական նշանակության՝ 264.3կմ,

*տեղական նշանակության՝ 407.9կմ։

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ։

Լոռու մարզի տարածքով է անցնում ՀՀ ամենաջրատատ լեռնային գետը՝ Դեբեդը, որի ափին դեռևս նախորդ դարի 20-ական թվականներին կառուցվել է «Ձորագետ հիդրո» ՀԷԿ-ը՝ 26.4 Մվտ ընդհանուր հզորությամբ։ ՀԷԿ-ն արտադրում է

հանրապետության հիդրոէներգիայի 4.1% և բավարարում մարզի պահանջների շուրջ 38.8%:

Մարզում գործում են 24 ՓՀԷԿ-եր՝ ընդհանուր 64.3ՄՎտ հզորությամբ, որոնք արտադրում են ՀՀ ՀԷԿ –երի արտադրության 5.1 %:

Միևնույն ժամանակ, կառուցման փուլում են գտնվում ևս 9 փոքր ՀԷԿ-եր՝ 9 699 կՎտ ընդհանուր հզորությամբ: Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման դեպքում մարզում էլեկտրաէներգիայի արտադրությունը կավելանա 39.8 մլն կՎտժ-ով:

2005թ.-ին Պուշկինի լեռնանցքում՝ ծովի մակարդակից 2038մ բարձրության վրա կառուցվել է 2,64 Մվտ ընդհանուր հզորությամբ «Լոռի-1» հողմակայանը: Այն Հայաստանում շահագործված առաջին հողմակայանն է: Մարզում առկա է հողմային և հիդրո էներգետիկայի զարգացման մեծ պոտենցիալ:

Մարզում կա ջրի մաքրման կայան միայն Վանաձոր քաղաքում, հզորությունը 150լ/վ հզորությամբ, սպասարկում է քաղաքի բնակչության միայն 11%-ը: Լոռու մարզի բոլոր համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի շահագործումն իրականացվում է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգից օգտվում է մարզի բնակչության 60%:

Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ:

ՀՀ-ում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2015թ.-ին կազմել է 1,316.4 հազ. մարդ, որը ՀՀ ընդհանուր բնակչության 43.9%-ն է կազմում: 2015թ. Լոռու մարզում բնակվում է հանրապետության տնտեսապես ակտիվ բնակչության 8.7%-ը կամ 114.7 հազար մարդ, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 58.8%-ը: 2013թ.-ի նկատմամբ տնտեսապես ակտիվ բնակչության թիվը նվազել է 12.5%-ով, որը հանրապետական միջին ցուցանիշից ցածր է 3.7%-ով:

Մարզի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են՝ արդյունաբերության

8.9%, գյուղատնտեսություն՝ 7,5%, շինարարություն՝ 5.6%, մանրածախ առևտուր՝ 3.6% և ծառայությունների՝ 1.5%: Հաշվի առնելով մարզի բնակչության տեսակարար կշիռը ՀՀ բնակչության կազմում՝ 7.5% է, պարզ է դառնում, որ մարզի արդյունաբերության զարգացվածության աստիճանը ավելի բարձր է քան միջին հանրապետության ցուցանիշը, գյուղատնտեսության ցուցանիշը հավասար է հանրապետության միջինին, մնացած ցուցանիշներով մարզը ցածր է գտնվում հանրապետության միջին ցուցանիշներից:

Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է (Թումանյանի տարածաշրջան): Արդյունաբերության հիմնական ուղղությունները հանքագործական (միակ մարզը ՀՀ հյուսիսային մարզերից), մշակող (մասնավորապես՝ մետաղագործական և սննդի) և թեթև արդյունաբերություններն են (Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

Մարզի արդյունաբերության ընդհանուր ծավալում հանքարդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 45.7%, մշակող արդյունաբերությանը՝ 43.8%, էլ.էներգիայի արտադրությանը՝ 9.6%, ջրամատակարարմանը և այլ ճյուղերինը՝ 0.9%:

2015թ. մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2011թ. համեմատությամբ աճել է 163.7%-ով, հանրապետության 132.8%-ի, Շիրակի մարզի 95.4%-ի և Տավուշի մարզի 161.7%-ի դիմաց: Միայն 2015թ ընթացքում մարզի 4 արդյունաբերական ձեռնարկություններ դադարեցրել են իրենց գործունեությունը, իսկ 6-ը սկսել են արտադրանք թողարկել:

2015թ. մարզում գործել են 25 փոքր ՀԷԿ և 1 հողմակայան, որոնք արտադրել են 207.3 մլն ԿՎտ/ժամ էլեկտրական էներգիա, աճը 2014թ. նկատմամբ կազմել է 125.6%: ՀԷԿ-ի արտադրանքը կազմում է հանրապետության ՀԷԿ-ի արտադրանքի 9.2%:

Մարզում առկա են մետաղական հանքավայրեր (պղինձի, ոսկու, մոլիբդենի, բազմամետաղների, ֆելզիտային և դացիտային տուֆեր, հանքային ջրեր և այլն):

Լոռու մարզում 2015թ. մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը գրեթե հավասար է հանրապետական միջին ցուցանիշին, սակայն 1.3 անգամ զիջում է Շիրակի մարզի և 1.1 անգամ Տավուշի մարզի ցուցանիշներին: 2015թ.-

ին 2011թ-ի. համեմատությամբ մարզում մեկ շնչին ընկնող համախառն գյուղատնտեսական արտադրանքը ավելացել է 137.9%-ով:

Լոռու մարզում գործում են 66 նախադպրոցական ուսումնական հաստատություններ (ՆՈՒՀ) 151 խմբով, որից 37-ը գործում են քաղաքային, 29-ը՝ գյուղական բնակավայրերում, 2011թ-ի դրությամբ ՆՈՒՀ-երի քանակն ավելացել է 7-ով: Նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող երեխաների թիվը 2015թ-ին մարզում կազմել է 4474 երեխա, որոնցից քաղաքային բնակավայրերում 3451 երեխա (77.1%), գյուղական բնակավայրերում՝ 1023 երեխա (22.9%): 2015թ.-ի դրությամբ ՆՈՒՀ հաճախող երեխաների թվի աճը 2011թ-ի նկատմամբ կազմել է 121.3%, որը միջին հանրապետականից բարձր է 7.4%-ով: Երեխա-մանկավարժ հարաբերակցությունը 2015թ.-ին կազմում է 12.6/1 հանրապետական միջինի 12.1/1-ի դիմաց: 10.0 հազ. բնակչի հաշվարկով, 2015թ.-ին մարզում ՆՈՒՀ-երի թիվը հանրապետական միջինից բարձր է 8.1%-ով, սակայն զիջում է Տավուշի մարզի ՆՈՒՀ-երի քանակին 1.6 անգամ, հաճախող երեխաների թիվը 2015թ-ի դրությամբ մնում է ցածր 198.84 զիջելով հանրապետական միջինին 21%-ով:

Տնային տնտեսությունների թիվը մարզում կազմել է 64285, որից 41%-ը գյուղական բնակավայրերում և 59%-ը՝ քաղաքային բնակավայրերում: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունների քանակը 1790 է կամ ընդհանուր տնային տնտեսությունների 2,8%-ը: Կիսակառույց տներում բնակվող տնային տնտեսությունների քանակը: Ընտանեկան նպաստառու ընտանիքների քանակը 20319 է կամ մարզի ընդհանուր տնային տնտեսությունների շուրջ 31.6%-ը և հանրապետության նպաստառու ընտանիքների 19.1%-ը (2015թ):

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***

Ղուրսալ-3 տեղամասը ներառված է Արջհովիտ /Ղուրսալ/ բնակավայրի վարչական տարածքում: Համայնքը գրավում է 15.72կմ² տարածք, բնակչությունը՝ 555 մարդ (տղամարդիկ՝ 287, կանայք՝ 268): Համայնքի հողային ֆոնդի բաշխվածությունը հետևյալն է.

- գյուղատնտեսական նշանակության հողեր – 673.63հա,

- բնակավայրերի հողեր – 140.71հա,
- արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերը – 36.62հա,
- Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր – 14.77հա,
- հատուկ պահպանվող տարածքների հողեր – 23.29հա,
- անտառային հողեր – 676.26հա,
- ջրային հողեր – 7.27հա:

Ավագակոպճային խառնուրդի տեղամասը ներկայացված է գյուղամերձ արոտավայրերով (գյուղատնտեսական նպատակային նշանակություն):

Ավագակոպճային խառնուրդի հանքավայրի փակման աշխատանքների բնույթը և մտադրությունները ներկայացվել են Արջհովիտ բնակավայրի բնակիչներին: Քննարկվել է աշխատանքներին համայնքի բնակիչների ներգրավվման հարցը :

Այլընտրանքային լուծումներ

Հանքավայրի փակման ժամանակ որպես այլընտրանք դիտարկվում է հանքայրի հետագա շահագործման շարունակումը:

Ներկայացված այլընտրանքային լուծումը թույլ կտա աշխատողների շարունակումը իրենց աշխատանքում:

Սակայն քանի որ հանքավայրի շահագործումը տնտեսապես ոչ ձեռնտու է ընկերությունը չի կարողանա շարունակել վճարել աշխատավարձեր:

Աշխատանքներից հրաժարման (գրոկայական) տաբերակը դիտարկվում է որպես տնտեսապես ոչ նպատակահարմար: Երկուստեղի ձևավորման համար Հանքավայրի փակումը կնպաստի կրճատել օտարվող մակերեսները և նվազեցնել փոշու արտանետումները՝ ռեկուլտիվացիայի իրականացման արդյունքում, ինչպես նաև հանքավայրի փակումից հետո հնարավոր ազդեցությունների շրջանակները շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կլինի գրոյական:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ղուրսալ-Խաչակապի հանքավայրի

«Ռուբեն և Էդվինա» ՍՊԸ-ի ծրագրավորված փակման աշխատանքերի իրականացման ընթացքում աննշան տեխնաժին ճնշումներ են դրսևորվելու մթնոլորտի, մակերևութային ջրերի, հողային ծածկույթի, բուսական և կենդանական աշխարհի, ինչպես նաև լանդշաֆտային ամբողջականության վրա:

Մթնոլորտային օդ.

Փակման ընթացքում աշխատող սարքավորումներն ու ավտոտրանսպորտը դառնալու է աննշան քանակությամբ վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր:

Նախնական հաշվարկներին համաձայն, բացահանքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները լինելու են նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտություններից զգալիորեն ցածր:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ նախատեսվող աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի 64-ն որոշման պահանջներով:

Հողային ծածկույթ.

Նախատեսվում է մարված պաշարների հատվածում իրականացնել խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնումները: Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ բուսահողը բացակայում է: Ռեկուլտիվացիայի է ենթարկվելու շահագործումից խախտված հողատարածքները, որտեղ մարված են ողջ պաշարները:

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազակոպձային խառնուրդի փակման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես նշվել է նախնական գնահատման հայտի 2-րդ գլխում, տեղամասի տարածքում բացակայում է համատարած բուսական ծածկը,

չկան անտառներ, չեն արձանագրվել բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ: Տարածքը տնտեսապես ակտիվ օգտագործվում է , հարակից է միջպետական նշանակության Մ3 ավտոճանապարհին, հետևաբար փակման աշխատանքները չեն հանգեցնի տարածքի էկոհամակարգերի վրա նշանակալից բացասական ազդեցությունների դրսևորմանը:

Թափոնների կառավարում

Հանքավայրի փակման աշխատանքների իրականացման ընթացքում առաջանալու են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ՝

- Շարժիչների բանեցված յուղեր՝
վտանգավորության դասը III, քանակը 0.65 տ/տարի
դասիչ՝ 5410020102033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:
- Դիզելային յուղերի մնացորդներ՝
վտանգավորության դասը III, քանակը 0.47տ/տարի
դասիչ՝ 5410030302033
բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ,
բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:
Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքում են, այդ նպատակով առանձնացված տարածքում, առանձին մետաղական տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման հանձնելու նպատակով: Հնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվում են առանձին տեղում և հանձնվում են, որպես մետաղի ջարդոն: Կենցաղային աղբը տեղափոխվում է մոտակա աղբահավաք կետ:

- Որպես արդյունահանման թափոններ հանդիսանում են մակաբացման ապարները, որոնք շահագործման ընթացքում կուտակվել են, համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ բաց եղանակով օգտակար հանածոների արդյունահանումից առաջացած մակաբացման ապարները հաշվառվել են 34000100 01 00 0 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Թափոնները գտնվում են պինդ ագրեգատային վիճակում, ջրում լուծվում են մասնակիորեն:

- Չտեսակավորված կենցաղային աղբ: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Վտանգավորության դասը՝ 4:

Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է, ռեակցիոնունակ չէ: Գտնվում է պինդ ագրեգատային վիճակում, խտությունը՝ մոտ 80կգ/մ³:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում հատուկ հատկացված, հիմքի հապատասխան մեկուսացում ունեցող տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :

- Կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով :

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիայի իրականացում:

- Հանում հողի բերրի շերտը, որը պահպանված էր դրա համար հատկացված վայրում նախատեսվում է հարթեցնելուց հետո բերել փռել մակերեսին և բազմամյա բույսերի տնկում իրականացնել:

- Առաջացող թափոնների կառավարում :

- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար :

- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և

հանձնվում որպես մետաղական ջարդոն :

- Նախատեսվում են սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

- Աղմուկի նվազեցման նպատակով նախատեսվում է մեքենաները սարքավորվել ձայնախլացուցիչներով:

- Նախատեսվում է կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

- Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:

Հանքի փակման ծրագրի իրականացման շրջանակում խմելու և տեխնիկական ջուրը նախատեսվում է բերել մոտակա Սպիտակ համայնքից՝ պայմանագրային հիմունքներով :

Նախագծում հաշվի է առնվելու նաև ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա որոշումը, ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 10-ի նիստի «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 և ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:

- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշմամբ սահմանված դեպքում՝ ամրագրված ընթացակարգերի պահպանում:

- Կենդանական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ,

ա) գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության,

պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը.

բ) կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը.

գ) կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության պահպանությունը.

դ) կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը.

Տեխնիկա-տրանսպորտային միջոցների ընթացիկ վերանորոգումները պետք է կատարել միայն այդ նպատակով նախատեսված արտադրական տարածքներում :

Փակման աշխատանքների ընթացքում «Ռուբեն և Էդվինա» ՍՊ ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, հետախուզական փորվածքների անցման շրջանակում, շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ: Որպես սահմանային թույլատրելի խտությունները ընդունվելու են. ածխածնի օքսիդի համար՝ 5մլգ/մ^3 , ազոտի երկօքսիդի համար՝ 0.085մլգ/մ^3 , մրի համար՝ $0,15\text{մլգ/մ}^3$:

2 հողային ծածկույթի պարբերական մշտադիտարկումներ, տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:

3 Աղմուկի և թրթռումի մշտադիտարկումներ ամսեկան մեկ անգամ հաճախականությամբ

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N 191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը:

Նախատեսվող բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիրը աղյուսակի տեսքով ներկայացվում են ստորև աղյուսակներում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիթորինգի կետի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 9-ում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾԸՆ ՈՒ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք /փակման ենթակա/, ճանապարհներ, արտադրական հրապարակ, օգտակար հանածոների արդյունահանված տարածքի և ռեկուլտիվացված արտադրական լցակայանների բնահողային հատվածի	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	արտադրական հրապարակ, , հանքի տարածք /փակման ենթակա/, օգտակար հանածոների արդյունահանված տարածքի և ռեկուլտիվացված արտադրական լցակայանների բնահողային հատվածի	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), -- հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Աղմուկ և թրթռում	օգտակար հանածոների արդյունահանված տարածքի և ռեկուլտիվացված արտադրական լցակայանների բնահողային հատված	Աղմուկի մակարդակը	Աղմուկի մակարդակի գործիքային չափում	Ամսեկան մեկ անգամ



● մթնոլորտային օդի մշտադիտարկման կետ

● հողի աղտոտվածության մշտադիտարկման կետ

- Աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկման կետ

Նկար 9, Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքերը:

Հանքավայրի փակման ծրագրի շրջանակում իրականացվող բնապահպանական կառավարման պլան

Գործողություն	Ինչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
1. Փոշի	Օդի վիճակը	Հանքի տարածք /փակման ենթակա/	Տեսողական զննում Գործիքային Չափումներ	Պարբերական	Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար
2. Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերի պահպանում - Ավտոմեքենաների և տեխնիկայի տեխնիկական վիճակը - Աղմուկի մակարդակը (բողոքների դեպքում) 	Հանքի տարածք /փակման ենթակա/	<ul style="list-style-type: none"> - Տեսողական զննում - Աղմուկի մակարդակի գործիքային չափում (բողոքների դեպքում) 	<ul style="list-style-type: none"> - Պարբերական - Բողոքից հետո երկու շաբաթվա ընթացքում 	Նվազեցնել անհարմարությունները անձնակազմի և հարևան համայնքների համար
3. Ավտոմեքենաների և տեխնիկայի սպասարկում	<ul style="list-style-type: none"> - Ավտոմեքենաների և տեխնիկայի լվացում բնական ջրային հոսքերից առավելագույն հեռավորության վրա <ul style="list-style-type: none"> - Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքում են, այդ նպատակով առանձնացված տարածքում, առանձին մետաղական տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ 	Հանքի տարածք /փակման ենթակա/	Աշխատանքների զննում	Ընտրանքային զննումներ աշխատանքային ժամերի ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Խուսափել սարքավորումների շահագործման ընթացքում նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից - Ժամանակին տեղայնացնել և նվազեցնել հնա- րավոր վնասը

	<p>հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման հանձնելու նպատակով: Հնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվում են առանձին տեղում և հանձնվում են, որպես մետաղի ջարդոն:</p>				
--	--	--	--	--	--

4. Ռեկուլտիվացիոն աշխատանքներ	<ul style="list-style-type: none"> - Մակաբացման ապարների պահեստավորված հատուկ հատկացված վայրերից հետ բերում փռում - Մակաբացման ապարների լցակայանների պարբերական ջրցանում փոշու գոյացումը նվազացնելու նպատակով 	Լցակայան	Աշխատանքների զննում	Պարբերաբար	<ul style="list-style-type: none"> - Հանքի շրջապատի գեղագիտական տեսքի պահպանում - Փոշու արտանետումների նվազեցում
5. Յուղերի փոխարինումից թափոնների առաջացում	<ul style="list-style-type: none"> - Բանեցված յուղերի փոխադրում պահեստ - Բանեցված յուղերի պահեստավորման պայմանները յուղերի պահեստում 	<ul style="list-style-type: none"> - Փոխադրման երթուղին - Բանեցրած յուղերի պահեստ 	Տեսողական զննում	<ul style="list-style-type: none"> -Յուղերի փոխադրման ընթացքում -Պարբերաբար յուղերի պահեստավորման ընթացքում 	Արտադրական հրապարակի տարածքի աղտոտումից խուսափում

6. Աշխատողների առողջություն և անվտանգություն	<ul style="list-style-type: none"> - Հանքի աշխատողների կողմից համազգեստի և ԱՊՄ կրումը - Հանքի սարքավորումների շահագործման և ԱՊՄ 	Հանքի տարածք /փակման ենթակա/	Աշխատանքների զննում	Աշխատանքների ողջ ընթացքում	Կրճատել հանքի բանվորների կողմից վնասվածքների ստացման և
--	---	------------------------------	---------------------	----------------------------	--

Գործողություն	Ինչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախակա- նությունը / կամ շարունակա- նությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	օգտագործման կանոնների խիստ պահպանում				պատահարների հավանականությունը
8. Վտանգավոր թափոնների (յուղոտ լաթեր, յուղով աղտոտված ավազ) կառավարում	<ul style="list-style-type: none"> - Վտանգավոր թափոնների առանձնացում հանքում առաջացած այլ տեսակի թափոններից - Պատշաճ կերպով փակվող և պահպանվող պահեստային տարածքի առկայություն վտանգավոր նյութերի համար - Համաձայնություն լիցենզավորված մարմինների հետ ազգային օրենսդրությանը և լավագույն ազգային պրակտիկային համապատասխան վտանգավոր թափոնները տարածքից դուրս բերելու և վերամշակելու/հեռացնելու վերաբերյալ 	հանքի տարածք /փակման ենթակա/	<ul style="list-style-type: none"> - հանքի զննում - Լիցենզավոր- ված կազմակեր- պության հետ թափոնների հեռացման վերաբերյալ պայմանագրի առկայության ստուգում 	Հանքի փակման ողջ ընթացքում	<ul style="list-style-type: none"> - Պատշաճ սանիտարական պայմանների պահպանում հանքի տարածքում - Արտադրական հրապարակի տարածքի աղտոտման սահմանափակում

9. Հանքի սարքավորումների շահագործում և պահպանում՝ փակման ծրագրի շրջանակում	- Յուղերի հավաքման միջոցների առկայություն տարածքում թափված և արտահոսած յուղերը մաքրելու համար	Հանքի տարածք /փակման ենթակա/	Հանքի տարածքի գնում	Հանքի փակման ողջ ընթացքում	- Տարածք մտնող անձնակազմի և այլ մարդկանց առողջության համար վտանգների կանխում
--	---	------------------------------	---------------------	----------------------------	--

Գործողություն	Ինչ (է հսկվում)	Որտե՞ղ է (հսկվում)	Ինչպե՞ս է (հսկվում)	Ե՞րբ (սահմանել հաճախականությունը / կամ շարունակականությունը)	Ինչու՞ է (հսկվում)
	- փակման ընթացքում յուղի արտահոսքի կանխում - Արտահոսած և պատահաբար թափված յուղերի ժամանակին մաքրում				- Սարքավորումների շահագործման ու պահպանության հետեվանքով նավթամթերքներով ջրի և հողի աղտոտումից խուսափում - Հրդեհի դեպքում վնասի ժամանակին տեղայնացում ու նվազեցում
10. Պատրաստվածություն արտակարգ իրավիճակներին	Հրդեհի ահազանգման և տեղայնացման համակարգերի առկայություն	հանքի տարածք	Պարբերական ստուգումներ	հանքի փակման ողջ ընթացքում	- Նվազեցնել ռիսկերը անձնակազմի և հարևան համայնքների համար - հանքի փակման ընդհատումից խուսափում

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է ԱՆՔԻԱՆԻ ՍՊՈՒԼ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ
(սեփականություն կամ օգտագործման)

«Անքին և Յրվեստ» ՍՊԸ
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Հրազ Ծարպ, ըսրասի հանայնի
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հանգեն), անվանումը)

Վարդևանյան ԵԿԱՏՄԱՍԲ

Պեպ Կոբարի 26.10.2010թ 6954 ստավաճառքի
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

Կարմելյան Գրի ԳԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅՔԻ ԵԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆԵՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
06-068-3-1 ՄԱՅՅԱՆԻ 12 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ .
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՍԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՂԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
 Ղեկավար Կարմելյան Գրի
(ստորագրություն)

2 Վարդևանյան 2010 թ.

4.S.

2781172

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ 06-068-114-004
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ Գյուղատնտեսական
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ Վարկային
 ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԸ (հա) 1,014
 ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ անհատական

ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) _____
 ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ _____

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Գ/Գ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆԹԻ ՏԵՍԱԿԸ


Լրացուցիչ նշումներ, փոփոխություններ _____

Կատարողներ Թ. Արմենյան
 (ստորագրություններ)




ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

5 : 1 : 2000
(մասշտաբը)



Հորից կետեր	Երկար մետր	Ճեղքանակի անկյունի 100% քաշ միլ-սեյս
1-2	26.9	մ. ճեղքանակի 6
2-3	173.9	=
3-4	48.1	=
4-5	138.6	=
5-6	80.5	=
6-1	49.2	ճեղքանակի 6

Կատարող


(ստորագրություն)



ՎԿԱՅԱԿԱՆԸ ՏՐՎԱԾ Է ակֆա կապիտալ ԻՐԱՎՈՒՆԵՐՈՎ
(սեփականություն կամ օգտագործման)

«Ռաբկո և Զբոլիևա» ՍՊԸ
(սեփականատիրոջ (օգտագործողի) անունը (անվանումը))

Լոռա քաղաք, ջրաբանի համայնք, վարչկետի
(անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը)

ՊՆՖ. Կոտայքի 15.04.09թ. թ. 671 արտփակագրի
(անշարժ գույքի ձեռքբերման իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը)

պայմանագրի ԴԻՄԱՆ ՎՐԱ

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅԵԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ, ԳՈՒՅԵԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱՎՈՒՆԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
06-068-3-1 ՍԱՑՄԱՆ 8 ՀԱՄԱՐԻ ՏԱԿ:

ՍՈՒՅՆ ՎԿԱՅԱԿԱՆԸ ԿԱԶՄՎԱԾ Է ԵՐԿՈՒ ՕՐԻՆԱԿԻՑ. ՄԵԿԸ ՏՐՎՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ
(ՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ), ՄՅՈՒՄԸ ՊԱՀՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅԵԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ԱՆԽԱՏԱԿԱԳՑՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՈՒՄ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅԵԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԱՆԽԱՏԱԿԱԳՑՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՏՈՐԱԲԱԺԱՆՄԱՆ
Ձեռագրի համարը 2405252
(ստորագրությունը)

2405252

ՀՈՂԱՄԱՍԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____ 06-068-114-005
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____ գյուղատնտեսական
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____ վարչության
 ԲՐԱՆՏԱՍԻ ՉԱՓԸ (հա) _____ 0,222
 ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏԵՍԱԿԸ _____ սեփական նույնը


ՇԵՆՔԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ _____
 ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ _____
 ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ _____
 ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.) _____
 ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏԵՍԱԿԸ _____

ՇԻՆՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

ԲԳ	ԿԱՂԱՍՏՐԱՅԻՆ ՀԱՄԱՐԸ	ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	ՄԱԿԵՐԵՍԸ (քառ. մ.)	ԻՐԱՎՈՒՆԵՔԻ ՏԵՍԱԿԸ


Ուացուցիչ նշումներ, փոփոխություններ _____

Կատարողներ՝ 
 (ստորագրությունները)



ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ


15.11.2000
(մասշտաբը)



ՀԱՅՏԱԿԱԳԻԾ	ԵՄԿԱՌԱՍՈ ՉԱԳՇ ՈՒՅՏՈՒՄ	ՈՒՂՈՂԱԿԱՆՈՒՄ ԼՈՐՁԱԿԱՆԱՏՄԱՅ ԵՐԱՍԻՆՈՒՄՆԵՐՆԻ ԿՇՈՒՆՆԵՐԻ ԿՆՁԱԿԱՆԱՏՄԱՅ
1-2	41.50	ՖԻԼՇԿԱԿԱՆՈՒՄ
2-3	49.20	ՆԻՇՆԱԿԱՆ ՎԻՇԻՇ
3-4	42.80	ԿԵՆԱԿՏՈՒՅԿԱՆ ԿՆՁԱԿԱՆԱՏՄԱՅ
4-1	56.90	ՖԻԼՇԿԱԿԱՆՈՒՄ



Կատարող Հ. Կարսյան
(ստորագրությունը)



Ռուբեն Խաչատրյանին 13.07.2022թ. տրված
 կադաստրի կոմիտեի տեղեկանքի համաձայն
 06-068-0114-0003,0004,0005,0006,0007,0008,0009
 Մ 1:2000





Ձև N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ ՇԱԹ-29/563

Տալու փարթիվը, ամիսը, ամսաթիվը 2017թ. օգոստոսի 13
18 տարի

Գործողության ժամկետը _____
«ՌՈՒԲԵՆ ԵՎ ԷՆԿԻՆԱ» ՍՊԸ

Ընդերքօգտագործողի անվանումը և գտնվելու վայրը _____
ՀՀ Լոռու մարզ գ.Ղուրսալ

01Ա 017709 03.10.1995թ

Ընդերքօգտագործողի պետական գրանցման
վկայականի համարը և ամսաթիվը _____

Տրամադրված պաշարների քանակն ըստ կարգերի 97070 մ³ B+C, ԱԿԽ-ի մարվող պաշար

Հանքի փարեկան
արտադրողականությունը 5000 մ³

Օգտակար հանածոյի անվանումը ԱԿԽ

Ուղեկից բաղադրիչների
անվանումները _____

Տրամադրված փեղամասի ծայրակետերի կոորդինատները
1.X=4522709 Y=8443340, 2.X=4522710 Y=8443222, 3.X=4522796 Y=8443227, 4.X=4522783 Y=8443301,
5.X=4522800 Y=8443406, 6.X=4522787 Y=8443388, 7.X=4522779 Y=8443383, 8.X=4522762 Y=8443329,
9.X=4522724 Y=8443343, 10.X=4522714 Y=8443336, (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02)
ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով)

Կից ներկայացված են՝
ՀՀ Լոռու մարզի Ղուրսալի ԱԿԽ-ի հանքավայրի
Ղուրսալի-3 տեղամաս

Օգտակար հանածոյի
արդյունահանման նախագիծը _____
(նախագծի անվանումը)

Ընդերքօգտագործման պայմանագիրը Պ-563

Լեռնահարկացման ակտը L-563
(համարը, կնքման ամսաթիվը)

(համարը, ամսաթիվը)

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒԹՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՊԱՇՏԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов.
Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք